

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ
ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
2014



Բովանդակություն

1. ՏՀՏ բիզնեսը Հայաստանում	2
1.1 Հայաստանում ՏՏ ոլորտի նկարագրությունը	2
1.2 Ինչու՞ բիզնես սկսել Հայաստանում	3
1.3 Իրավական դաշտը	7
1.4 Մրցակցային առավելություններ	13
2. 2014 թվականի հետազոտություն	13
2.1 Ընտրանք և մեթոդաբանություն	13
3. Ձեռք բերված հիմնական տվյալներ	16
3.1 Ծրագրային ապահովում և ծառայություններ	18
3.1.1 Տնտեսական ցուցանիշներ	18
3.1.2 Հիմնական մասնագիտացումներ	19
3.2 Հեռահաղորդակցություն	21
3.2.1 Ոլորտի նկարագրությունը և տնտեսական ցուցանիշները	21
3.2.2 Ինտերնետ ծառայությունների ծածկույթը	23
4. ՏՀՏ ոլորտում գործունեության իրականացման հիմնական խնդիրները	24
5. Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքները Հայաստանի ՏՀՏ ընկերություններում	25
6. Կրթական ոլորտ	28
6.1 Ընդհանուր նկարագրություն	28
6.2 Բարձրագույն ուսումնական հաստատություններ	30
6.3 Պրոֆեսորադասախոսական կազմ և ուսումնական մեթոդներ	34
6.4 Ուսանողներ	36
6.5 Համագործակցություն մասնավոր հատվածի հետ	36
7. ՏՀՏ ոլորտի աշխատուժի կառուցվածքը	37
8. ՏՀՏ ոլորտի դերը Հայաստանի տնտեսության մեջ	42
8.1 Զարգացման միտումներ և հեռանկարներ	42
8.2 Ներքին շուկա	43
8.3 Արտահանում	44
8.4 Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններ	45
8.5 Հաջողության և ձեռքբերումների օրինակներ	46
9. Ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականությունը և հիմնական ձեռքբերումները	48
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	56

1. SՀS բիզնեսը Հայաստանում

1.1 Հայաստանում SS ոլորտի նկարագրությունը

Ներկայումս լայնորեն ընդունելի է այն փաստը, որ համաշխարհային տնտեսության աճի արագ տեմպերը վերջին տասնամյակում պայմանավորված են տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների բնագավառում կատարված նորամուծություններով և տարբեր արդյունաբերական ճյուղերում դրանց կիրառմամբ: Դեռևս Խորհրդային Միության իշխանության տարիներին լինելով ծրագրային ապահովման մշակման, արդյունաբերական հաշվարկման, էլեկտրոնիկայի, կիսահաղորդիչների արտադրության կենտրոն և պահպանելով տեխնոլոգիական ոլորտում զարգացման մեծ ներուժը, Հայաստանը շարունակում է տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը պայմանավորված է իր բավականին բարձր մրցակցային ներուժ ունեցող աշխատուժով, ՀՆԱ-ում ունեցած իր մասնաբաժնով, ինչպես նաև ընկերությունների թվի ու ընդհանուր շրջանառության աճի տեմպերով:

Ընդհանուր ոլորտի շրջանառությունը, որը կազմված է ծրագրային ապահովման և ինտերնետ ծառայությունների ոլորտներից, հասել է 474.9 ԱՄՆ դոլար, ինչը համապատասխանում է 25.2% աճի 2013-ի համեմատ:

Հայաստանում մրցակցային բարձր առավելություններ ունեցող տեխնիկական աշխատուժի շնորհիվ SՀS խոշոր ընկերությունների և վերագրային կազմակերպությունների համար նպաստավոր ու շահավետ ներդրումային պայմաններ են ապահովվում: Հաշվարկվել է, որ այս մրցունակ մասնագետները տարեկան մինչև 46,000 ԱՄՆ դոլարի արտադրողականություն են ապահովում իրենց ընկերությունների համար:

Հայաստանյան SՀS ընկերությունների հիմնական մասնագիտացումներն են՝ ներկառուցված ծրագրային ապահովման մշակումը և կիսահաղորդիչների նախագծումը, ծրագրային ապահովման պատվերները և արտապատվիրումը, ֆինանսական ծրագրերի մշակումը, մուլտիմեդիային նախագծումը, վեբ ծրագրավորումը, տեղեկատվական համակարգերը և համակարգերի ինտեգրումը: Հայաստանը լուրջ նվաճումներով առանձնանում է հատկապես կիսահաղորդիչների նախագծման ծրագրերի և դրանց հարակից մտավոր սեփականության օբյեկտների ստեղծման բնագավառում:

Ներկայումս Հայաստանում գործում են 400 SՀS ընկերություններ, որոնք միջինում ապահովում են տարեկան 20% աճ: Այս ընկերությունների մեծամասնությունը տեղակայված է Երևանում (գրեթե 90%-ը), այնուամենայնիվ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է ՀՀ այլ մարզերում, հատկապես Շիրակի և Լոռու մարզերում:

Միայն 2013 և 2014 թվականներին 34 նոր ընկերություններ են հիմնադրվել, որոնցում ստեղծվել են շուրջ 300 նոր աշխատատեղեր: Ընդհանուր առմամբ, 2014 թվականի ընթացքում մոտ 1100 նոր աշխատատեղեր են ստեղծվել:

Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտությունն իրականացվում է 2002թ-ից: Հետազոտությամբ նպաստակ է դրվում հետևել

SZS ոլորտում արձանագրվող զարգացմանը և անհրաժեշտ միջոցառումներ իրականացնել՝ ուղղված վերհանված խնդիրների կարգավորմանը:

1.2 Ինչու՞ բիզնես սկսել Հայաստանում

Օտարերկրյա ներդրողների համար Հայաստանում մի շարք արտոնություններ են առաջարկվում: Մասնավորապես, հիմնադիր կապիտալում ներդրումների կատարման համար տուրքեր չեն գանձվում և որևէ խոչընդոտներ չկան շուկա մուտք գործելու նպատակով կատարվող ներդրումների համար: «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով ներդրումների պաշտպանության հնգամյա ժամկետ է սահմանվում օրենսդրական անբարենպաստ փոփոխությունների դեպքում: Բացի դրանից, տարեկան հարկային վնասները տեղափոխվում են հաջորդ ֆինանսական տարի:

Հարկ է նշել, որ Համաշխարհային բանկի 2013 թվականի «Doing Business» դասակարգման վարկանիշային աղյուսակում «Բիզնես վարելու դյուրինությունը» ցուցանիշում Հայաստանը զբաղեցրել է 32-րդ տեղը (185-ի միջից), իսկ «Բիզնեսի հիմնադրում» ցուցանիշում՝ 11-րդ տեղը:

Ըստ նույն աղբյուրի, Հայաստանում առավել դյուրին է դարձել բիզնեսի հիմնադրումը՝ հետզհետե ցուցանիշային ընթացակարգերի պարզեցման և ընկերությունների հիմնադրման համար վճարների վերացման շնորհիվ:

Ստորև բերված աղյուսակում¹ ներկայացված են բիզնեսի հիմնադրման և վարման հիմնական ցուցանիշները: Ինչպես ցույց է տրված աղյուսակում, ներկայացված ցուցանիշները Հայաստանում ավելի նպաստավոր են, քան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և SZԶԿ անդամ երկրներում:

Ցուցանիշ	Հայաստան (2014)	Եվրոպա և Կենտրոնական Ասիա	SZԶԿ երկրներ
Բիզնեսի հիմնադրման և հաշվառման համար պահանջվող ժամկետ (օրեր)	3	12.1	9.2
Բիզնեսի հիմնադրման համար պահանջվող ծախսերը (մեկ շնչին ընկնող եկամտի %)	1	5.3	3.4

¹ Աղբյուրը՝ <http://www.doingbusiness.org>

Պայմանագրերի կատարման ապահովում. ժամանակ (օրերով)	570	448.1	539.5
Պայմանագրերի կատարման ապահովում. ծախսեր (պահանջի %)	14	25.2	21.4
Ընդհանուր հարկային դրույքաչափ (եկամտի %)	20.4	34.9	41.3

Իրականացված բարեփոխումների շարքում առանձնակի ուշադրության է արժանի նաև 2011 թվականի մարտի 25-ին բացված իրավաբանական անձանց պետական ռեգիստրը, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով: Արդյունքում պարզեցվել են գրանցման գործընթացները և բիզնեսի գրանցման համար անհրաժեշտ ժամանակը կրճատվել է գրեթե երկու շաբաթով: Ներդրված նոր համակարգի պայմաններում կրճատվել են նաև բիզնեսի հիմնադրման համար անհրաժեշտ ծախսերը:²

Հարկային ոլորտ

Ստորև ներկայացված են Հայաստանում գործող հարկերի հիմնական տեսակները, որոնք համարվում են բավականին ցածր՝ համեմատած այլ երկրների հետ՝

- *բազմաստիճան/միասնական եկամտահարկ և աշխատողների սոցիալական ապահովագրության վճար, որի դրույքը տատանվում է 24.4-36%-ի սահմաններում,*
- *ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)՝ 20% կամ շրջանառության հարկ 3%,*
- *շահութահարկ՝ 20%:*

2013 թվականին աշխատողի և գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարները և եկամտային հարկը միավորվեցին՝ դառնալով մեկ միասնական եկամտային հարկատեսակ, ինչով բավականին պարզեցվեց հարկերի վճարման ընդհանուր համակարգը: Նույն տարում ուժի մեջ մտավ «Շրջանառության հարկի մասին» օրենքը, որով շահութահարկին (20% դրույքաչափ) այլընտրանք հանդիսացող հարկատեսակ է սահմանվում (շրջանառության հարկով հարկման դրույքաչափը կազմում է 3.5-5%) մինչև 58.35 մլն. դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների համար (բացառություն են կազմում վարձակալությունից եկամուտները, տոկոսները, ռոյալթիները, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտները, որոնց նկատմամբ հարկման դրույքաչափը կազմում է 10%, և նոտարական գործունեությունից եկամուտները, որոնց նկատմամբ հարկման դրույքաչափը կազմում է 20%):

² Աղբյուրը՝ <http://www.ifc.org>

Գործում են նաև արտոնություններ արտահանողների համար, որոնցից են արտահանման տուրքերի չկիրառման, արտահանվող արտադրանքի և ծառայությունների արժեքի մեջ ներառված ԱԱՀ-ի վերադարձման համակարգը: Որոշ ՏՏ արտադրանքների ներմուծումը ազատված է մաքսային տուրքերից և հարկերից, իսկ որոշ սարքավորումների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի գանձումը հետաձգվում է: ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ համակարգչային ծրագրերի բովանդակության արժեքը ներառված չէ մաքսային արժեքի մեջ, որը սահմանափակվում է զուտ կրիչի արժեքով: Այս դրույթը համապատասխանում է մաքսային արժեքի որոշման վերաբերյալ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության համաձայնագրերին և «Մակագների և առևտրի գլխավոր համաձայնագրին»:

2014 թվականը նշանավորվեց հարկային բարեփոխումների նոր փաթեթի ընդունմամբ և կիրարկմամբ: Այս իրավական ակտերի ընդունումը պայմանավորված էր փոքր եւ միջին ձեռնարկությունների և համատեղ առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող ընտանիքի անդամների համար հարկման առավել բարենպաստ հարմայն պայմաններ ապահովելու անհրաժեշտությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև նշված փոփոխությունները գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում շրջանառության հարկ վճարողների կողմից գործարքները չփաստաթղթավորելու մոտեցումը նկատելիորեն նպաստում էր ստվերային շրջանառությանը, իսկ ընտանիքի անդամների կողմից համատեղ իրականացվող ընտանեկան ձեռնարկատիրության համար հարկման առաձևահատուկ մոտեցումների բացակայությունը էականորեն խոչընդոտում էր այս խմբի տնտեսավարող սուբյեկտների ձևավորման ու զարգացման գործընթացին:

Այսպես, վերոնշյալ իրավական բարեփոխումներով 2014 թվականի հոկտեմբերի 1-ից ներդրվեց ընտանեկան ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ հարկման արտոնյալ համակարգը: «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանվեցին ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու և դադարելու կարգերը, կարգավորվեցին հարկման և հարկային հաշվառման հարցերը:

- Սահմանվեց, որ հարկային օրենսդրության կիրառության իմաստով ընտանեկան ձեռնարկատիրություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը, եթե նախորդ օրացուցային տարվա ընթացքում տվյալ գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի չի գերազանցում 18.0 մլն ՀՀ դրամը:

- Ամրագրվեց, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները ազատվում են ընտանեկան ձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր պետական հարկերից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից), բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներին (այդ թվում՝ վարձու աշխատող համարվող) ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող

եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվելու ու վճարելու պարտավորությունից, որը վճարվում է յուրաքանչյուր անձի համար ամսական 5 հազար դրամի չափով՝ մինչև եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

- Բացի դրանից, «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանվեցին 2015թ. հունվարի 1-ից ԱԱՀ վճարող և շրջանառության հարկ վճարող համարվելու նոր կարգերը և պարզեցված ընթացակարգերը:

Այսպես, վերոնշյալ իրավական կարգավորումների համաձայն, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված կամ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող իրավաբանական անձը, օտարերկրյա կազմակերպության ՀՀ հաշվառված մասնաճյուղը (անկախ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսանալու հանգամանքից), նոտարը կամ անհատ ձեռնարկատերը ԱԱՀ վճարող կհամարվի օրացուցային տարվա հունվարի 1-ից մինչև տարվա ավարտը, եթե հունվարի 1-ի դրությամբ օրենքի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ օրենքով սահմանված ժամկետներում հարկային մարմին չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով փոփոխվեցին շրջանառության հարկի դրույքաչափերը, սահմանվեց ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պահանջը և նախատեսվեցին պատասխանատվության միջոցները:

Այսպես, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտների մասով շրջանառության հարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի նկատմամբ 1% դրույքաչափով (ներկայիս 3.5%-ի փոխարեն): Առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողները պարտավոր են, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթավորել բոլոր ապրանքներ ձեռք բերելու գործարքները:

2014 թվականին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվեց ՏՏ նորաստեղծ ընկերությունների համար հավելյալ հարկային արտոնություններ սահմանող մեխանիզմների մշակումը, ինչը ակնկալվում է, որ կվավերացվի 2015 թ.-ի առաջին ամիսներին: Նորաստեղծ ընկերությունների համար սահմանվել է պարզեցված ընթացակարգ, և դրա համաձայն, նորաստեղծ ընկերություններից պահանջվում է ընդամենը 10% եկամտային հարկ և 0% շահութահարկ վճարել գործունեության առաջին երեք տարիների ընթացքում, պայմանով՝ որ ընկերությունը լինի նոր ստեղծված, չլինի դուստր ընկերություն կամ վերակազմակերպված ընկերություն, և ունենա թվով 30-ից ոչ ավելի աշխատող:

Նպատակ ունենալով առավել կանխատեսելի դարձնել հարկային օրենսդրության դաշտը, 2014 թվականին ընդունվեց և օրինական ուժի մեջ մտավ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը (ՀՕ-152): Նշված օրենքով հարկային դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի

սահմանմանում նախատեսող օրենքների կամ Հայաստանի Հանրապետության այլ օրենքների նման դրույթները գործողության մեջ դնելու համար ժամանակային պայման ամրագրվեց, որի համաձայն, նման օրենքները և դրույթները պետք է ուժի մեջ մտնեն այդ օրենքների կամ դրույթների ընդունման տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո՝ վեցերորդ ամսվա 1-ից:

1.3 Իրավական դաշտը

Հայաստանի Հանրապետությունը 2014թ.-ի ընթացքում շարունակել է հետամուտ լինել հանրապետության տնտեսության համար առավել հեռանկարային համարվող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գործընթացին: Ոլորտի առաջընթացին նպաստող կարևորագույն նախապայմաններից է Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն ծավալող իրավաբանական անձանց (այսուհետ՝ ՏՏ ընկերությունների) համար ներդրումային միջավայրի շարունակական բարելավումը: Այս նպատակով ՀՀ կառավարությունը 2014թ.-ի ընթացքում ապահովել է նախկինում այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շարունակականությունը, ինչպես նաև ձեռնարկել է մի շարք լրացուցիչ միջոցառումներ պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր ստեղծելու ուղղությամբ: Բացի դրանից, ձեռնարկված միջոցառումներն ուղղված են եղել նաև հավասար մրցակցային պայմաններ և գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ ձևավորելու, ինչպես նաև հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն իրականացնելու նպատակների իրագործմանը:

Վերոշարադրյալ առաքելության կյանքի կոչման ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2014 թվականի փետրվարի 20 -ին ընդունվեց «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2014թ.-ի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 258-Ա որոշումը (այսուհետ՝ «Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2014թ.-ի ծրագիր»): Այսպես 2014թ.-ի ընթացքում բարեփոխումներ են իրականացվել, ինչպես նաև շարունակվել են ամրապնդվել նախկինում ներդրված բարեփոխումները մի շարք ուղղություններով, որոնցից ՏՏ ընկերությունների համար գործարար և ներդրումային միջավայրի բարելավման մասով առավելապես ուշադրության են արժանի հարկերի վճարման, արտաքին առևտրի, ընկերությունների հիմնադրման, պայմանագրերի կիրարկման, վարկերի ստացման, ներդրողների պաշտպանվածություն, սեփականության գրանցման և այլ ոլորտներում ինչպես արդեն իրականացված այնպես էլ իրականացման գործընթացում գտնվող միջոցառումները:

Էլեկտրոնային կառավարում

2014թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում շարունակվել է արդյունավետորեն կիրառվել նախկինում ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգը, որը զետեղված է www.e-gov.am համացանցային կայքում, և որտեղ մեկտեղվում

են էլեկտրոնային կառավարման համար անհրաժեշտ բոլոր գործիքներն ու ռեսուրսները: Նշված կայքը հանրապետությունում գործող SS ընկերությունների համար մատչելի է դարձնում մի շարք այնպիսի համակարգեր, ինչպիսիք են՝ հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը, Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգը և Մտավոր սեփականության գործակալության տեղեկատվական որոնման համակարգը, լիցենզիաների հայտերի ընդունման համակարգը, պետական վճարումների էլեկտրոնային համակարգը, Անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգը, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման համակարգը, Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգը, ինտերնետով հրապարակային ծանուցման պաշտոնական կայքը, էլեկտրոնային ստորագրության, էլեկտրոնային վիզաների, բաժինները: Նշված համակարգերից մի քանի մասին կներկայացվի ստորև շարադրվածում:

Հիշատակված կայքում նաև ներկայացված է «Գրեք նամակ կառավարությանը» բաժինը, որը յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս գրավոր ներկայացնել սեփական կարծիքը, տեսակետը և դիրքորոշումը, ինչպես նաև «Հետևեք ձեր նամակի ընթացքին» բաժինը, որը յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս տեղեկանալ, թե կառավարության որ մարմինն կամ պաշտոնյային է վերահասցեագրվել առձեռն հանձնած կամ փոստով ուղարկած դիմումը:

Արտաքին առևտուր

2014թ.-ի ընթացքում շարունակվել են աշխատանքները՝ ուղղված արտահանվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերի «մեկ պատուհան» սկզբունքով տրամադրման համար համապատասխան տեղեկատվական համակարգերի տեխնիկական բնութագրերի մշակմանը և ՀՀ մաքսային սահմանային անցակետերում այդ համակարգերի ներդրմանը: Մաքսային բնագավառի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ մաքսային ծառայության պաշտոնական կայքում համապատասխան բաժին է գործարկվել, ինչպես նաև մաքսային մարմինների որոշումների բողոքարկման ընթացակարգերին հանրությանը ծանոթացնելու նպատակով տեղեկատվական թերթիկներ են պատրաստվել և հրապարակվել: Բացի դրանից, մաքսային ոլորտի հարցերի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2014թ.-ի ընթացքում պարբերական բնույթ կրող դասընթացներ են իրականացվել:

Մաքսային ոլորտում տեղ գտած նորամուծությունների շարքում անհրաժեշտ է նշել տրանսպորտային միջոցների մաքսագերծման գործընթացի շրջանակներում իրականացվող վարչարարության ժամկետների կրճատումը, ինչի արդյունքում մաքսային ձևակերպումներից մինչև հաշվառումը ներառող գործընթացներն իրականացվում են 1 ժամում: Տրանսպորտային միջոցների մաքսագերծման ընթացակարգերի քանակը կրճատվել է կրկնակի անգամ, իսկ հերթականությունը դարձել է առավել համակարգված և տրամաբանական:

2014 թվականի կարևորագույն ձեռքբերումներից էր նաև բիզնեսի խթանմանն ուղղված «TAX FREE» նոր նախաձեռնության ներդրումն ու գործարկումը, ինչով Հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների նկատմամբ կիրառվող հարկային և մաքսային համակարգերը ևս մեկ քայլով մոտեցան առաջադեմ չափանիշներին: 2014 թվականից սկսած Հայաստան ժամանող օտարերկրյա քաղաքացիները հնարավորություն կունենան երկրից մեկնելիս հետ ստանալ մեր երկրում ձեռք բերված ապրանքների համար վճարված ԱԱՀ-ն:

ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը երկրորդն էր, որ գործարկեց այս համակարգը, որը գնահատվեց որպես ամենադյուրին կիրառելի համակարգը, քանի որ այն ամբողջությամբ գործում է մեկ հարթակի վրա, այսինքն՝ օտարերկրացին սպառման կետերում ներկայացնում է միայն անձնագիրը, իսկ լրացված ամբողջական տեղեկատվությունն ավտոմատ փոխանցվում է ՀՀ բոլոր մաքսակետեր:

Համակարգից հնարավոր է օգտվել, եթե ձեռք բերված ապրանքի համար առկա է «Tax free invoice» կամ ՀԴՄ հաշիվ և կտրոն (նույն հարկ վճարողից) և եթե մեկ օրվա ընթացքում ձեռք բերված ապրանքների արժեքը գերազանցել է 100 հազար ՀՀ դրամը (ներառյալ՝ ԱԱՀ-ն), ԱԱՀ-ն գերազանցել է 16 670 դրամը, և եթե ապրանքը չի օգտագործվել մինչև արտահանումը՝ պահպանելով գործարանային փաթեթավորումը: Գումարի վերադարձման հնարավորությունն ուժի մեջ է գնումը կատարելուց հետո 90 օրվա ընթացքում: «Tax free» համակարգից օգտվելու բացառություններից են սննդամթերքը, ծխախոտը, դեղամիջոցները, մշակութային արժեքները, տրանսպորտային միջոցները կամ դրանց մասերը: Ձեռք բերված ապրանքների համար վճարված ԱԱՀ-ն օտարերկրյա քաղաքացիներին վերադարձվում է Հայաստանից մեկնելիս՝ օդանավակայաններում և սահմանային բոլոր մյուս անցակետերում, մաքսային ծառայողին ներկայացնելով անձնագիրը, ԱԱՀ վերադարձի հարկային հաշվի թղթային տարբերակը կամ ՀԴՄ հարկային հաշիվը, արտահանման ենթակա ապրանքների դիմաց կատարված վճարումը հավաստող փաստաթուղթը (ՀԴՄ կտրոնը կամ կամ բանկային փոխանցման անդորրագիրը), ԱԱՀ վերադարձի հարկային հաշվում (ՀԴՄ հարկային հաշվում) նշված արտահանվող ապրանքը, իսկ օդային ճանապարհով մեկնելու դեպքում՝ նաև թռիչքի կտրոնը: Մաքսային մարմինը «Tax free invoice» կամ հսկիչ-դրամարկղային մեքենայի «Tax free» հաշվի վրա դնում է «Ենթակա է վերադարձման» կնիք՝ նշելով նաև վերադարձման ենթակա գումարը, որը ստացվում է բանկային փոխանցմամբ՝ 30 օրվա ընթացքում կամ կանխիկ՝ անցակետերում գործող բանկային մասնաճյուղերից:

Իրավաբանական անձանց հիմնադրում

Հանրապետությունում ՏՏ ընկերությունների համար բարենպաստ գործարար միջավայրի ձևավորման գործընթացում 2014 թվականը նաև նշանավորվեց իրավաբանական անձանց հիմնադրման ընթացակարգերի պարզեցմանն ուղղված մի շարք նախաձեռնություններով:

Իրավաբանական անձանց գրանցման ոլորտում շարունակում են կիրառվել «արագացված գործակիցները»: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռնում պետական գրանցման կամ պետական հաշվառման գործընթացն իրականացնել օրենքով սահմանված ժամկետներից ավելի արագ՝ համապատասխան վճարների դիմաց:

Անհրաժեշտ է նշել, որ 2014 թվականին կատարելագործվել է դեռևս նախորդ տարիներին հիմնված՝ իրավաբանական անձանց գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման կենտրոնը (www.e-register.am):

Բացի դրանից, Հայաստանյան ՏՏ ոլորտը և նշված ոլորտում գործող ընկերություններն արտասահմանյան ներդրողների համար առավել թափանցիկ և մատչելի ներկայացնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից ապահովվեց E-registry կայքի անգլերենով և ռուսերենով հասանելիությունը:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ոլորտ

2014թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ՏՏ ընկերությունների համար ձևավորված գործարար միջավայրի մասին խոսելիս նաև պետք է առանձնացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման գործընթացում տիրող իրավիճակը, ինչը, մասնավորապես, կարևոր է նոր հիմնադրվող և արդեն հիմնադրված ու զարգացման հեռանկարներ ունեցող ընկերությունների համար: 2014թ.-ին շարունակվեցին իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կառուցվածքային և գործառնության վերակազմակերպման աշխատանքները: Այսպես, դեռևս նախկինում կոնսոլիդացված տարածքային ստորաբաժանումներից առանձնացվեցին սպասարկման գրասենյակները, որոնք գործում են առանձին վարչական միավորներում, ընդ որում, հարկ է նշել, որ իրավունքների գրանցման դիմում հնարավոր է ներկայացնել ցանկացած ստորաբաժանումում անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից, իսկ իրավունքների գրանցումը հավաստող վկայականն այժմ կարելի է ստանալ գրասենյակներից յուրաքանչյուրում, անկախ այն հանգամանքից թե որ գրասենյակում է դիմումը մուտքագրվել համակարգ:

2014թ.-ի ընթացքում շարունակվել են կիրառվել գործարար միջավայրի զարգացման համար նվազ կարևորություն չունեցող իրավունքների պետական գրանցման ոլորտում գանձվող վճարի այսպես կոչված «արագացման գործակիցները»: Այսպես՝ օրինակ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դիմողի ցանկությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման պետական գրանցումը կարող է կատարվել նաև արագացված կարգով, որի դեպքում տվյալ օրենքով սահմանված վճարները բազմապատկվում են հետևյալ գործակիցներով՝ պետական գրանցման դիմումը ներկայացվելու օրվանից 3-րդ

աշխատանքային օրը, պետական գրանցում կատարելու դեպքում՝ 2 գործակցով (այսինքն սահմանված վճարումը կրկնապատկվում է), պետական գրանցման դիմումը ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, պետական գրանցում կատարելու դեպքում՝ 3 գործակցով (այսինքն սահմանված վճարումը եռապատկվում է):

SS ընկերությունների համար գործարար միջավայրի բարելավման գործում մեկ այլ կարևոր դրական քայլ էր անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման գործարքների համար նախկինում կիրառվող նոտարական վավերացման պահանջի վերացումը: Այսպես, 2012թ-ին գործողության մեջ մտան «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները: Օրենքի 5-րդ գլխի պահանջների և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված «Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշմամբ հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին պայմանագրերի օրինակելի ձևերը, որոնց միջոցով գործարքները կնքվում են կողմերի ստորագրությունների իսկության ճանաչման ձևով առանց նոտարական վավերացման, այդ նպատակով պայմանագրի կողմերը պետք է անձամբ ներկայանան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի որևէ սպասարկման գրասենյակ և տեղում համապատասխան աշխատակցի ներկայությամբ ստորագրեն պայմանագրի փաստաթուղթը:

Իրավունքների պետական գրանցման ոլորտում շարունակվել է կիրառվել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գրանցումների էլեկտրոնային համակարգը, այն իրենից ներկայացնում է գրանցումների պաշտոնական էլեկտրոնային համակարգ և զետեղված է Կոմիտեի www.e-cadastre.am պաշտոնական կայքում: Համակարգը հնարավորություն է տալիս «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով առցանց ներկայացնել անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմումները և դիմումներին կից փաստաթղթերը: Համապատասխան կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի N 165-Ն որոշմամբ:

Պայմանագրերի կիրարկում

Հայաստանի Հանրապետությունում SS ընկերությունների համար ձևավորված գործարար միջավայրը ներկայացնելիս անհրաժեշտ է նշել, որ դեռևս նախորդ տարիներին իրականացված փոփոխությունների արդյունքում վերացվել էր իրավաբանական անձանց կողմից կնքվող գործարքները կամ այլ փաստաթղթերը «կնիքով» վավերացնելու՝ նախկինում գործող հայեցողական պայմանը: Այլ կերպ ասած, հանրապետությունում գործող իրավաբանական անձանց կողմից քաղաքացիաիրավական գործարքները միայն

ստորագրությամբ կնքելու հանգամանքը հետագայում չի կարող հիմք հանդիսանալ դրանց անվավերության համար:

2014թ.-ի ընթացքում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ արձանագրված դրական տեղաշարժերի շարքում կարելի է առանձնացնել նաև պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործընթացների, ժամկետների ու ծախսերի կրճատումը, ինչպես նաև իրազեկման մակարդակի բարձրացման ուղղված այնպիսի նախաձեռնությունները, ինչպիսիք են՝ պայմանագրերից ծագող վեճերի լուծման համար անհրաժեշտ գործընթացների և ծախսերի մանրամասն նկարագրությամբ բրոշյուրների տպագրումը:

Բացի դրանից, դատական վեճերի լուծման ժամկետները կրճատելու, դատարանին ենթակա որոշ հարցերով որոշումների կայացման իրավասությունը նոտարներին փոխանցելու, դատավարության փուլերը հստակեցնելու, կանխատեսելիությունն ավելացնելու, մասնավոր փորձագետների եզրակացությունների կիրառման համար հստակ հիմքերի սահմանելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությանը հանձնարարվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ մշակել:

Վճարումների պետական էլեկտրոնային համակարգ

2014թ.-ի ընթացքում հաջողությամբ շարունակվել է կիրառվել վճարումների պետական էլեկտրոնային համակարգը (www.e-payments.am): Համակարգը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական տուրքի, տեղական տուրքի վճարումները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը կամ վարչական տուգանքները կատարել էլեկտրոնային եղանակով:

Վճարումները կարելի է կատարել ArCA կամ MasterCard վճարային քարտերի, ինչպես նաև վիրտուալ ArCA քարտի միջոցով: Վճարումները դասակարգված են չորս հիմնական խմբերի՝ տուրքեր, ծառայությունների վճարներ, տուգանքներ և հարկեր: Դրանք իրենց հերթին պարունակում են ենթադասակարգիչներ, որոնց միջոցով վճարողը կարող է ավելի դյուրին կերպով գտնել իրեն անհրաժեշտ վճարման տեսակը:

Համակարգը ընդունում է նաև համայնքային վճարումներ (օրինակ՝ գույքահարկ, հողի հարկ, աղբահանության վճար և այլն) Երևան քաղաքի բոլոր համայնքների, ինչպես նաև Գյումրի և Վանաձոր քաղաքների համար: Հետագայում համակարգը կներառի նաև ՀՀ այլ համայնքներ:

Վճարումների պետական էլեկտրոնային համակարգի միջոցով օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներին և այլ երկրների քաղաքացիներին հնարավորություն է տրվում կատարել հյուպատոսական ծառայությունների (օրինակ՝

անձնագրի ստացում, մուտքի արտոնագրի ստացում և այլն) տրամադրման համար վճարումներ կամ պետական տուրքերի վճարումներ:

Վենչուրային ֆոնդի նախաձեռնություն

Հայաստանյան SS ընկերությունների համար գործարար ներդրումային միջավայրի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել 2014թ.-ի ընթացքում հաջողությամբ գործարկված վենչուրային ֆոնդի նախաձեռնության մասին: Ֆոնդը կարևոր նշանակություն ունի Հայաստանյան SS ընկերությունների համար, քանի որ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի զարգացումից բացի ֆոնդը նպատակ ունի խթանել նաև Հայաստանի SS ընկերությունների նորարար նախաձեռնությունները, նպաստել արևմտյան շուկաների հետ կապերի հաստատմանը և սեփական կարողությունների զարգացմանը:

1.4 Մրցակցային առավելություններ

SZS ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների համար բարենպաստ երկիր լինելով՝ Հայաստանը տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ ունի հետևյալ մրցակցային առավելությունները՝

- միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների իրականացման կարողություններ ճարտարագիտության, ինֆորմատիկայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառներում,
- բարձրակարգ և շնորհալի մասնագետներ՝ տեխնիկական հմտություններով և անգլերենի իմացությամբ,
- SS և հարակից այլ մասնագիտացումներով ԲՈՒՀ-ական հիմնարար ծրագրեր,
- մրցակցային բարձր մակարդակ ունեցող էժան աշխատուժ և ցածր գործառնական ծախսեր,
- պետության կողմից ոլորտին հատկացվող շոշափելի աջակցություն և ներդրումային դաշտը բարելավելու պատրաստակամություն,
- SS ոլորտի կայուն և շարունակական զարգացում,
- ուժեղ և բարգավաճող Մփյուռքի ներկայություն Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում,
- խոշոր վերազգային ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձ,
- մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ:

2. 2014 թվականի հետազոտություն

2.1 Ընտրանք և մեթոդաբանություն

Հետազոտության ընտրանքային շրջանակը 2014 թվականին ընդլայնվել է՝ ընդգրկելով Հայաստանում գործող մոտ 400 ՏՀՏ ընկերությունները, որոնք դասակարգվել են ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների խմբ. 2-ի (NACE rev.2): Ընդլայնված դաշտի տվյալների ժամանակային շարքերին հետևելու համար 2013թ.-ի տվյալները համապատասխանաբար ճշգրտվել են:

Տեղեկություններ և տվյալներ

Հետազոտության համար որպես հիմք են ընդունվել հարցազրույցների ժամանակ ոլորտի ներկայացուցիչների կողմից ներկայացված տեղեկությունները: Ոչ լիարժեք կամ ոչ արժանահավատ տեղեկությունները մոտավորապես համապատասխանեցվել են ՏՀՏ ոլորտի զարգացման մոդելի գնահատումների արդյունքում ստացված տվյալների հետ:

Այնուամենայնից, ելնելով ոլորտում ունեցած մեր փորձից, այլ հետազոտություններում և հրապարակումներում կատարված հաշվարկներից և այլ աղբյուրներից՝ վստահ ենք, որ սույն հետազոտությունում ներկայացված է ոլորտի բավականին ճշգրիտ պատկերը, դրա հիմնական միտումներն ու հատկանիշները, այդ թվում նաև հեռանկարները:

Ձևակերպումներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծրագրային ապահովման և ծառայությունների սեգմենտը ընդգրկում է այն ընկերությունները, որոնք առաջարկում են ծրագրային ապահովման մշակում և սպասարկում, ծրագրավորման ծառայություններ, խորհրդատվություն և ինտեգրում, գրաֆիկայի, անիմացիոն և մուլտիմեդիա ծրագրեր, միկրոսխեմաների նախագծում, ճարտարագիտական և գիտահետազոտական ու փորձարարական ծառայություններ: Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից առաջարկում են ինտերնետային կապ (մեծածախ կամ մանրածախ) տարբեր աղբյուրներից: Այս խմբում ներառված են VoIP ձեռնարկությունները և վեբ հոսթինգի և վեբ պորտալների հետ աշխատանքներ իրականացնող ընկերությունները: Չնայած այս Հետազոտությանը մասնակցած ընկերությունների գործունեությունը ծավալվում է տեխնոլոգիաների ոլորտի տարբեր այլ բնագավառներում, վերը նշված երկու սեգմենտները դրանց գործունեության և եկամտի գոյացման հիմնական ուղղություններն են: Համապատասխանաբար, ոլորտի ցուցանիշները հաշվարկելիս օգտագործվել է այդ ընկերությունների գործունեության միայն ծրագրային ապահովման և ինտերնետային ծառայությունների սեգմենտը: Տեղական ընկերություններն այն ձեռնարկություններն են, որոնք գործում են Հայաստանում և դրանց սեփական կապիտալի առնվազն 51%-ը պատկանում է Հայաստանի քաղաքացիներին, մշտական բնակիչներին կամ տեղական մասնակցությամբ ընկերություններին: Արտասահմանյան/օտարերկրյա կամ արտասահմանյան բաժնեմասնակցությամբ մասնաճյուղերը և ընկերություններն այն ձեռնարկություններն են, որոնք գործում են Հայաստանում և դրանց սեփական կապիտալի

առնվազն 51%-ը պատկանում է օտարերկրյա քաղաքացիներին, ռեզիդենտներին կամ ընկերություններին:

Ելակետային դրույթներ և գնահատման ու հաշվարկման մեթոդներ

Արտադրողականության ցուցանիշը հաշվարկվել է մեկ աշխատակցից ստացած տարեկան հասույթով: Հաշվարկվել է երկու ցուցանիշ. առաջինը՝ ոլորտի ամբողջ հասույթը բաժանած աշխատողների ընդհանուր թվի վրա, երկրորդը՝ յուրաքանչյուր ընկերության տարեկան հասույթը մեկ աշխատակցի հաշվով, որի հիման վրա այնուհետև հաշվարկվել է ոլորտի ընդհանուր միջին ցուցանիշը: Չնայած երկրորդ ցուցանիշը արտադրողականության ավելի լավ պատկեր է ստեղծում, այդուհանդերձ այն դժվարեցնում է ոլորտի աճի կանխատեսումը: Այդ պատճառով ոլորտի կանխատեսումները կատարվել են առաջին մեթոդով: Արտադրողականության հաշվարկները կատարվել են միայն ծրագրային ապահովման և ծառայությունների սեգմենտի ընկերությունների համար:

Աշխատուժի ծավալը հաշվարկելիս վերցվել են Ծրագրային ապահովում և ծառայություններ սեգմենտի տեխնիկական և բիզնես կամ ադմինիստրատիվ մասնագետների, ինչպես նաև Ինտերնետ ծառայությունների սեգմենտի տեխնիկական աշխատուժի ծավալները:

Ոլորտի հետազոտության նկարագրություն

Սույն հետազոտությունը հիմնված է 2014 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՁԻՀ-ի կողմից կատարված հարցման արդյունքների վրա: Հարցմանը մասնակցել են երեք հիմնական խմբեր՝ ծրագրային ապահովման և ծառայությունների սեգմենտում գործող ընկերություններ, ինտերնետային ծառայություններ տրամադրող ընկերություններ, և S2S մասնագիտություններին առնչվող հիմնական ԲՈԻՀ-ի ֆակուլտետներ: Ուսումնասիրությունն ընդգրկել է ոլորտի զարգացման և աճի համար կարևոր մի շարք բնագավառներ, որոնք են՝ գործարար միջավայրը և իրավական դաշտը, եկամուտները, կրթական համակարգը, մարդկային ռեսուրսները, արտահանումը և այլն: Ուսումնասիրության մեջ օգտագործվել են նաև տեղեկություններ 2003-2013թթ. ՁԻՀ-ի կողմից նախկինում կատարված հետազոտություններից:

2014թ. հարցմանը մասնակցել են ծրագրային ապահովման, SS խորհրդատվության և ինտերնետ կապի ծառայություններ մատուցող գրեթե 200 ընկերություն և առաջատար ԲՈԻՀ-երի SS ուղղվածության ֆակուլտետներ:

Երախտիքի խոսք

Ամենամյա հետազոտությունն իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ:

ՁԻՀ հետազոտական թիմը շնորհակալություն է հայտնում հարցման մասնակից հայաստանյան ՏՀՏ ընկերությունների ղեկավարությանը, ինչպես նաև ԵՊՀ, ՀՊՃՀ, ՌՀՀ, Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների եվրոպական տարածաշրջանային ինստիտուտի (ERIICTA), Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի և ՀԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներին՝ իրենց ժամանակը տրամադրելու և տվյալների հավաքագրմանն աջակցելու համար:

Ստորև ներկայացված են մեր հետազոտական խմբի անդամների անունները, որոնց հետ միասին շնորհակալություն ենք հայտնում հետազոտության իրականացման և Հայաստանի ՏՀՏ ոլորտի 2014 թվականի հետազոտության պատրաստման գործում ներգրավված բոլոր մասնակիցներին, այդ թվում՝ տեղերում աշխատանքներ իրականացնող թիմին և կամավորներին:

Արեգ Գևորգյան՝ հետազոտության ղեկավար, մեթոդաբանության մշակում, շուկայի ընդհանուր ուսումնասիրություն և վերլուծություն, գեկույցի կազմում


Վարդուհի Գրիգորյան՝ տվյալների վերլուծություն, կրթական ոլորտի և աշխատուժի ուսումնասիրություն, գեկույցի կազմում

Արամ Խաչատրյան՝ ՏՏ ոլորտին առնչվող իրավական դաշտի վերլուծություն

3. Ձեռք բերված հիմնական տվյալներ

Հայաստանի ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտը բավականին երիտասարդ է. ընկերությունների մեծ մասը՝ ավելի քան 80%-ը, հիմնադրվել է 2000-2014թթ.: Ծրագրավորման ոլորտի առաջին մասնավոր տեղական ձեռնարկությունը հիմնվել է 1987թ., այնուհետև հինգ տարվա ընթացքում Երևանում բացվել է արտասահմանյան ընկերության առաջին մասնաճյուղը: 1991-1997թթ. տեխնոլոգիական ոլորտն ապրել է բավականին ծանր անցումային շրջան, երբ տարածաշրջանային հակամարտությունները, անկումային տնտեսությունը և բարձրակարգ մասնագետների արտագաղթը զգալիորեն խոչընդոտել են տնտեսության ընդհանուր վերականգնումը: 1998թ. դրությամբ Հայաստանում գործում էին 35-40 ծրագրավորող ընկերություններ և ինտերնետային կապի պրովայդերներ, որտեղ՝ ըստ տարբեր հաշվարկների, աշխատում էին շուրջ 1000 մասնագետներ: 1998թ. ոլորտում աշխատող մասնագետների թիվը էապես ցածր էր 1987թ. գրանցած ցուցանիշից, երբ միայն Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտն ուներ մինչև 10000 աշխատակից: Վերջին տասնմեկ տարիների ընթացքում ոլորտում գրանցվել է թե՛ տեղական նորաստեղծ ձեռնարկությունների, թե՛ արտասահմանյան մասնաճյուղերի կտրուկ աճ:

ՏՀՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ, ԸՍՏ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ



2014 թվականին գործող ՏՀՏ ընկերությունների թիվը հասել է գրեթե 400-ի, ինչը նշանակում է, որ մոտ 4% աճ է արձանագրվել նախորդ տարվա համեմատ: 2004-2014թթ. միջին տարեկան հաշվով հիմնվել է մոտ 25 ՏՀՏ ձեռնարկություն: Համեմատության համար նշենք, որ 1990-ականներին այդ ցուցանիշը եղել է տարեկան միայն 5-6 ընկերություն:

2008թ. գրանցվել է առավելագույն ցուցանիշը, երբ հիմնվել է շուրջ 30 նոր ընկերություն: Ստեղծված ընկերությունների քանակի այս ցուցանիշը դժվար է պահպանել, քանի որ առկա բարձրակարգ ծրագրավորողների, ճարտարագետների և ծրագրերի ղեկավարների քանակը երբեմն չի բավականացնում անգամ գործող ընկերություններին:

2010-2014թթ չէ կոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվել էին մի շարք դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում բիզնես գաղափարների մրցույթների և նորարարության խթանմանը: Իրականացված միջոցառումների արդյունքում ՏՀՏ մասնագետներից և ուսանողներից ձևավորվել են թիմեր, որոնք աշխատում են ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում նորարար պրոդուկտների ստեղծման ուղղությամբ: 2014թ-ին այդ թիմերից 16 նոր ընկերություններ են կազմավորվել: Պետության կողմից տրամադրվող օժանդակությունը կշարունակվի հասկացվել նաև հաջորդ տարի՝ Գյումրիում և Վանաձորում իրականացվելիք դրամաշնորհային ծրագրերի միջոցով, որոնց արդյունում ակնկալվում է, որ առնվազն 20 նոր ընկերություններ կձևավորվեն 2015 թվականին:

Հայաստանի SՀS ընկերությունների մոտ 51%-ը հիմնադրվել է 2007-2014թթ ժամանակահատվածում: Նշենք, որ 2013 և 2014 թվականներին հիմնադրվել են համապատասխանաբար 16 և 17 նոր ընկերություններ: Ոլորտում գործող ընկերությունները կայուն աճ են ապահովում երկրի տնտեսության համար, ինչի արդյունքում 2014թ-ին Հայաստանի SՀS ոլորտի շրջանառության աճը կազմել է 20% նախորդ տարվա համեմատ:

3.1 Ծրագրային ապահովում և ծառայություններ


3.1.1 Տնտեսական ցուցանիշներ

2014թ. Հայաստանի ծրագրավորման և ծառայությունների ոլորտի շրջանառությունը կազմել է մոտ 349.4 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է 19% տարեկան աճ նախորդ տարվա համեմատ: Ընդհանուր առմամբ 2009-2014թթ. ոլորտում գրանցվել է 21.8% միջին տարեկան աճ:

Տեղական ընկերությունների մասնաբաժինը ոլորտի ընդհանուր եկամուտների մեջ կազմում է 45%՝ ի տարբերություն 2011թ.-ին գրանցված 42%-ի: Վերջին հինգ տարիների ընթացքում տեղական ընկերությունների վիճակը բավականին բարելավվել է. աճել է աշխատակիցների թիվը, կատարելագործվել են նրանց տեխնիկական հմտությունները և շուկայի վերաբերյալ գիտելիքները, դեռ ավելին, նրանց կողմից իրականացվում են առավել բարդ և բարձր գնահատվող ծրագրեր:

Ինչպես երևում է ստորև բերված գրաֆիկից, ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի 40 խոշոր ընկերություններ (1 միլիոն ԱՄՆ դոլար և ավելի շրջանառությամբ), որոնք կազմում են գործող ձեռնարկությունների ընդամենը 11%-ը, ձևավորում են ոլորտի ընդհանուր հասույթի 60%-ը: Ոլորտի ընդհանուր հասույթի մեջ խոշոր ընկերությունների մասնաբաժինը 2013 թվականի հետ համեմատ ավելացել է:


SS ընկերությունների գրեթե կեսը 100,000-ից մինչև 1,000,000 ԱՄՆ դոլարի չափով տարեկան եկամուտ ունեն: Միջին չափի ընկերությունների մասնաբաժինը նվազել է՝ կազմելով 52%, համեմատած 2013 թվականի հետ (57%): Տվյալները ցույց են տալիս, որ այս նվազումը պայմանավորված է միանգամայն առողջ հանգամանքներով, այն է՝ միջին ընկերությունների՝ խոշոր ընկերությունների վերափոխվելու փաստով, ինչպես նաև 2014 թվաանին 17 նոր ընկերությունների ստեղծմամբ:



100,000 ԱՄՆ դոլարից պակաս հասույթ ունեցող փոքր ընկերությունների թիվը 2013թ-ի համեմատ աճել է 10%-ով, իսկ նրանց մասնաբաժինը ոլորտի ընդհանուր հասույթում աճել է 50%-ով: Չնայած, որ փոքր ընկերությունները զգալի ազդեցություն չունեն ոլորտի վրա, նրանց քանակի աճը վկայում է տեղական շուկայի շարունակական զարգացման մասին:

3.1.2 Հիմնական մասնագիտացումներ


Ներկայումս հայաստանյան ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում գործում են 363 ընկերություններ: Այս ընկերությունների գրեթե կեսից ավելին մասնագիտացած են համակարգչային ծրագրերի մշակման գործում:



Ընկերությունների բաշխումը ըստ մասնագիտացումների

Գծապատկերում ներկայացված տվյալները ցույց են տալիս ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի ընկերությունների մասնագիտացման ուղղությունների ուսումնասիրության արդյունքները՝ ըստ ընկերությունների ընդհանուր կազմում նրանց զբաղեցրած տեղի: Ինչպես երևում է, ըստ ընկերությունների թվի, գերակշիռ տեղ է զբաղեցնում «Ծրագրային ապահովման պատվերների և արտապատվիրման» գծով մասնագիտացումը, ինչպես նաև «Համակարգերի մշակում և ավտոմատիզացիա» մասնագիտացումը:

Ինչ վերաբերվում է ոլորտում եկամուտների բաշխմանը ըստ ՏՏ ընկերությունների մասնագիտացումների, ապա առավել եկամտաբեր հիմնական ոլորտներն են ծրագրային ապահովման պատվերները և արտապատվիրումը, միկրոսխեմաների նախագծումը, տեստավորումը և հարակից ծառայությունները: Հարկ է նշել, որ չնայած ՏՏ ընկերությունների միայն 6%-ն է մասնագիտանում միկրոսխեմաների նախագծման ոլորտում, այնուհանդերձ այս սեկտորի եկամուտները կազմում են ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի ամբողջ շրջանառության մոտ 20%-ը:




Եկամուտների բաշխումը ըստ մասնագիտացումների

3.2 Հեռահաղորդակցություն

3.2.1 Ոլորտի նկարագրությունը և տնտեսական ցուցանիշները

Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում գործում են 33 ընկերություններ, որոնք դասակարգվում են որպես լարային հեռահաղորդակցության համակարգերի ծառայություններ (61.10), անլար հեռահաղորդակցության համակարգերի ծառայություններ (61.20), հեռահաղորդակցության կապի այլ տեսակների ծառայություններ (61.90) տրամադրող ընկերություններ և վեբ պորտալների հետ կապված գործողություններ (63.12) իրականացնող ընկերություններ:

Այս ընկերությունների կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները ներառում են շարժական և ֆիքսված կապի, մալուխային և անլար ինտերնետի տրամադրման, SS ենթակառուցվածքի տրամադրման (օրինակ՝ վեբ հոսթինգ) և VoIP ծառայություններ: Նշենք, որ հեռահաղորդակցության ոլորտում գործող ընկերությունները իրենց ծառայությունները տրամադրում են ավելի շատ ներքին շուկայի, քան արտասահման համար:



Գրաֆիկից երևում է, որ շարժական կապի ծառայություններից ստացված եկամուտներն ամենամեծ կշիռն ունեն Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի եկամուտների կազմում: Հայաստանում գործում են բջջային կապի երեք օպերատորներ՝ «Արմենտել/Բիլայն», որի սեփականատերն է Ռուսաստանում բջջային կապի խոշորագույն օպերատորներից մեկը՝ «ՎիմպելԿոմ» ընկերությունը (NYSE:VIP), «ՎիվաՍել/MTS», որի սեփականատերն է Ռուսաստանի և ԱՊՀ շուկաներում բջջային կապի խոշորագույն օպերատոր՝ «Mobile TeleSystems» ընկերությունը (NYSE:MBT), և «Orange Armenia», որի սեփականատերն է հեռահաղորդակցության ոլորտում աշխարհի առաջատար օպերատոր «France Telecom» ընկերությունը: 2013թ-ին «Ucom» հեռահաղորդակցային ընկերությունը որպես չորրորդ օպերատոր շարժական կապի ծառայությունների շուկա մուտք գործելու լիցենզիա ստացավ: Ծառայությունը նախատեսվում է տրամադրել 2015-ի հունվարի 1-ից:

Հայաստանում շարժական կապի հեռահաղորդակցության շուկայում 2014 թվականին դրական դինամիկա է արձանագրվել: Շարժական կապի հասանելիության ծածկույթը հասել է 121%-ի՝ տարեկան կտրվածքով ապահովելով 5% աճ: 2014 թվականի հոկտեմբեր ամսվա տվյալներով, Հայաստանում առկա են շարժական կապի 3.4 միլիոն օգտագործողներ/բաժանորդներ: Մինչդեռ ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում աճի բացասական միտումներ են արձանագրվել դեռևս 2009 թվականից սկսած՝

առանց առաջընթացի մասին վկայող որևէ սպասելիքների: «Beeline» ընկերությունը վերջապես ավարտին հասցրեց ազգային թվայնացման ծրագիրը՝ դանդաղ տեմպերով ընթացող աճի տարիներից հետո 2012 թ. արդյունավետորեն հասնելով 100% թվայնացման:


Հայաստանում ինտերնետ ծառայությունների սեգմենտի ընդհանուր եկամտի 96%-ն ապահովվում է ինտերնետ մատակարարող հինգ խոշոր ընկերությունների կողմից, որոնցից մեկը հայկական ընկերություն է, իսկ մնացած չորսը օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններ են:

Ընդհանուր առմամբ, 2013թ.-ի համեմատ ամբողջ հեռահաղորդակցության ոլորտում աճի դանդաղ միտումներ են արձանագրվել, ինչը վկայում է շուկայի հագեցվածության մասին: Ակնկալվում է, որ եկամտի ընդհանուր ծավալները կհասնեն 474.8 մլն ԱՄՆ դոլարի: Հաճախորդների/բաժանորդների թիվը աճել է 13%-ով՝ հասնելով 5.1 միլիոնի:

2014թ.-ին ինտերնետ ծառայությունների (մալուխային, անլար և VoIP) ոլորտում գոյացած եկամուտը կազմել է 125.7 մլն ԱՄՆ դոլար: Նշված ծառայությունների ծավալի մեջ օտարերկրյա ընկերությունների մասնաբաժինը կազմում է 86%: Նախորդ տարվա համեմատ՝ ինտերնետ ծառայությունների սեգմենտից ստացված եկամուտներն աճել են 16%-ով:

3.2.2 Ինտերնետ ծառայությունների ծածկույթը

Ինտերնետի հասանելիության մեծացումը և դրանից օգտվելու հնարավորությունների ավելացումը հիմք ծառայեց երիտասարդ օգտագործողների շրջանում հետաքրքրվածության ավելացման համար: Ինտերնետ կապից (այդ թվում՝ անլար 3G և GPRS) օգտվողների թիվը հասել է շուրջ 67%-ի, այսինքն՝ ընդհանուր տվյալներով կան 2 միլիոն օգտագործողներ:



Ինտերնետ կապի ծածկույթի մեծացման հետ մեկտեղ առաջընթաց է արձանագրվել նաև ֆիքսված և շարժական հեռահաղորդակցության ոլորտում, ինչի արդյունքում շարժական կապից օգտվողների թիվը 2014 թվականին հասել 3.1 միլիոնի:

Ինտերնետ հասանելիության ծառայություններ տրամադրող ընկերությունների 48%-ը օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններ են: Հայաստանում ինտերնետ ծառայություններ տրամադրող ընկերությունները ներքին շուկայում առաջարկում են հետևյալ ծառայությունները՝ ADSL,

օպտիկամանրաթելային և մալուխային ինտերնետ, WiFi և WiMax անլար հասանելիության տեխնոլոգիաներ, ընդհանուր նշանակության փաթեթային ռադիոկապ (GPRS), EDGE, CDMA և 3G տեխնոլոգիաներ (UMTS/WCDMA), 4G/LTE: Չնայած 4G/LTE վրա հիմնված ինտերնետ ծառայությունները հասանելի են միայն շատ սահմանափակ թվով տեղերում, այդ թվում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում և Ծաղկաձորում:

Ներկայումս ADSL ծառայության բաժանորդների թիվը Հայաստանում հասնում է 152,000-ի: Սակագնային պլանները ներառում են ինտերնետ արագության տարբեր սխեմաներ, ներառյալ՝ 1 Մբ/վ-ից մինչև 32 Մբ/վ արագագործությամբ հասանելիություն: Այս տեսակի ծառայությունները հասանելի են Հայաստանի գրեթե ողջ տարածքում՝ բացառությամբ 150 գյուղերի, որտեղ բացակայում են հեռախոսային կապի լարային միացումները:

Օպտիկական մանրաթելային ցանցերի (FTTB) բաժանորդների թիվը 84,000 է: Այս ծառայությունների հասանելիությունն աշխարհագրական առումով սահմանափակված է, և դրանք հասանելի են հիմնականում Երևանում և Արմավյան քաղաքում:

2014 թվականին լայնաշերտ ինտերնետ (այդ թվում՝ 3G) ծառայություններից օգտվողների թիվը հասել 1.1 միլիոնի: Նշված ինտերնետ ծառայության արժեքը 1 Մբ/վ-ի համար կազմում է 4500 ՀՀ դրամ (10 ԱՄՆ դոլար): Բացի դրանից, օպերատորների կողմից առաջարկվում են նաև երեք ծառայություններ՝ մեկ փաթեթում, որը ներառում է IP հեռուստատեսային և ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ, իսկ փաթեթի միջին գինը՝ 11 Մբ/վ արագագործությամբ ինտերնետ կապով, կազմում է 10000 ՀՀ դրամ (22 ԱՄՆ դոլար):³

Անլար տեխնոլոգիաների (WiMax4 WiFi) ծառայությունների բաժանորդների թիվը կազմում է 2470,000 բաժանորդ: 2014թ.-ի վերջին 3G կապի ծածկույթը հասել է 97.1%-ի: Անլար ցանցերով տվյալների փոխանցումը և ինտերնետ կապի ծառայությունները կազմակերպվում են GSM/EDGE (900ՄՀց և 1800 ՄՀց), UMTS 2100 և UMTS 900 տեխնոլոգիաների միջոցով:

Ի տարբերություն կորպորատիվ շուկայի՝ սպառողական շուկայում ակնհայտ առաջատարներ չկան: Մատակարարների առաջարկները այս ծառայությունների համար տատանվում են 10,000 մինչև 25,000 ՀՀ դրամի սահմաններում (22\$ մինչև 55\$)՝ կախված ապահովվող հասանելիությունից և ծառայությունների որակից:

4. S2S ոլորտում գործունեության իրականացման հիմնական խնդիրները

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների ղեկավար օղակների ներկայացուցիչների գրեթե քառասունյոթ տոկոսի (46.8%) կողմից որպես խնդրահարույց հարց ներկայացվել է բարձր որակավարում ունեցող աշխատուժ ներգրավելու խնդիրը: Հարցվածների 58.86 տոկոսը որպես հիմնական խոչընդոտ հանդիսացող գործոն է նշել բարձր որակավորում ունեցող

³ www.psrc.am

մասնագետների պակասը, ինչը վկայում է այն մասին, որ բարձրակարգ հմտություններով և փորձառու տեխնիկական աշխատուժի նկատմամբ պահանջարկն աճում է: Իսկ նման պահանջարկն էլ իր հերթին, բնականաբար, հանգեցնում է տեխնիկական մասնագետների վարձատրության չափի աճին: Ավելին, ուսումնասիրության ենթարկված ընկերությունների 41%-ի համոզմամբ, այս իրավիճակի համար հիմնական պատճառը ուղեղների արտահոսքն է:

Հարցված ընկերությունների կողմից ներկայացված պատասխանների համաձայն, հարկային և մաքսային ընթացակարգերը նույնպես խոչընդոտում են ոլորտում ընկերությունների զարգացմանը (38% և 40% համապատասխանաբար): Հարկ է նշել, որ այսպիսի կազմակերպությունների 71%-ի տարեկան շրջանառությունը փոքր է 500,000 ԱՄՆ դոլարից: Ըստ հարցվածների, իրենց եկամուտների զգալի մասն ուղղվում է ԱԱՀ-ի և շահութահարկի վճարմանը: Ավելին՝ մաքսային դրույքաչափերը որոշվում են տեղական իշխանությունների կողմից: Բացի դրանից, կազմակերպությունները շեշտել են, որ ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը, ինչպես նաև պետական և հասարակական կազմակերպությունների կողմից աջակցության պակասը խոչընդոտում են հայկական ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի աճին: Ընտրանքում ներառված կազմակերպությունների՝ համապատասխանաբար քառասուներեք (43) երեսունինը (40) տոկոսը շեշտեցին այսպիսի արգելքների առկայությունը:


Հարցված կազմակերպությունների մոտ քսան տոկոսը (18.98%) ունի միջազգային շուկա մուտք գործելու հետ կապված խնդիրներ: Ինչպես նշեցին հարցման մասնակիցները, այս խնդրի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ բազմաթիվ միջազգային գործընկերներ տեղյակ չեն Հայաստանի մասին կամ պարզապես չեն վստահում ցածր կամ միջին եկամուտ ունեցող երկրի ներկայացուցչին: Հարկ է նշել, որ հարցված ընկերությունների մոտ 6 տոկոսի կողմից որպես պրոբլեմ նշվել է անհստակ հարկային օրենսդրությունը, մինչդեռ դրա մասին հարցազրույցը վարողները հարց չեն տվել: Հատկանշական է, որ 2014 թվականի ՏՀՏ հետազոտությանը մասնակցած ընկերություններից ընդամենը 2%-ն է նշել կրթության ցածր մակարդակի հետ կապված խնդիրների մասին, իսկ գրեթե 3%-ը որպես բիզնեսի զարգացման խոչընդոտ նշել է շուկայի հազցվածության և իրենց փոքր մասշտաբների հետ կապված խնդիրները:

5. Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքները Հայաստանի ՏՀՏ ընկերություններում

Իրենց սեփական պրոդուկտները մշակող և գիտահետազոտական ու փորձարարական աշխատանքների ոլորտում ներդրումներ կատարող հայաստանյան ՏՀՏ ընկերությունների թիվը տարեցտարի ավելանում է, ինչը դրական ցուցանիշ է և վկայում է այն մասին, որ Հայաստանում ՏՀՏ ոլորտը օտարերկրյա ընկերությունների համար արտապատվիրման ռեսուրս լինելուց վերափոխվում է՝ դառնալով տեխնոլոգիական զարգացման կենտրոն:

Ընտրանքում ներառված ընկերությունների սեփական ապրանքներից և ծառայություններից գոյացող միջին եկամուտն ավելացել է՝ կազմելով ոլորտի ընդհանուր եկամուտի 52%-ը՝ ի տարբերություն 2013 թվականին արձանագրված 43% ցուցանիշի: Խոշոր ընկերությունների մոտ նորարարական գործունեությունից ստացվող եկամուտների ծավալը էապես փոխկապված է ընկերության աշխատակիցների թվի հետ, այսինքն՝ որքան մեծ է ընկերությունը, այնքան մեծ են գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներում ներդրումների ծավալները:

Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներում ներգրավված ընկերությունների բաշխվածությունն՝ ըստ տեղական և օտարերկրյա ընկերությունների, ներկայացված է ներքևում:



Ինչպես երևում է, ԳևՓ աշխատանքներում ներդրումներ կատարող ընկերությունների ընթանուր թվաքանակի մեջ ավելացել է տեղական ընկերությունների թիվը՝ 51%-ից հասնելով 68%-ի, ինչը պայմանավորված է տեղական տեխնոլոգիական ոլորտի նորաստեղծ ընկերությունների ավելացմամբ:

2013-2014 թվականներին հիմնադրված ընկերությունների 71%-ի համար սեփական ապրանքների կամ ծառայությունների զարգացումը գործունեության հիմնական ուղղություն է հանդիսանում, ինչը մեկ տոկոսով գերազանցում է նախորդ տարի արձանագրված ցուցանիշը: Այս տվյալները վկայում են այն մասին, որ նորարարությունը հայկական S2S ոլորտում աճի միտում ունի:

Ընդհանուր առմամբ, գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների գծով հարկային խթանները գործիքներ են, որոնք պետության կողմից օգտագործվում են այդ ուղղությամբ իրականացվող գործունեությանն օժանդակելու համար: Ընկերությունների տեսանկյունից հարկային խթանները նորարարության հետ կապված ծախսերը նվազեցնելու արդյունավետ եղանակներ են: Պետության կողմից տրամադրվող հարկային խթանների բազմաթիվ տարբերակներ կան, որոնք առանձնահատուկ են իրենց բնույթով և տեսակով: Գիտահետազոտական և փորձարարական (ԳևՓ) աշխատանքների գծով հարկային խթանների մասով հարկման սխեմաները դասակարգվում են երեք հիմնական կատեգորիայի՝

1. Ծախսերի վրա հիմնված հարկային խթանները հաշվարկվում են կազմակերպության՝ համապատասխան ԳևՓ ծախսերի ծավալից ելնելով: Օրինակ, Ֆրանսիայում կազմակերպությանը հատկացվող հարկային սուբսիդիայի չափը տատանվում է կազմակերպության ԳևՓ աշխատանքներով պայմանավորված ծախսերի 30-ից 40%-ի սահմաններում (ներառյալ գիտահետազոտական աշխատանքների գծով աշխատողների վարձատրության և արժեզրկման ծախսերը):
2. Ակտիվների վրա հիմնված հարկային արտոնությունները հաշվարկվում են որպես ԳևՓ նպատակներով օգտագործվող ակտիվների արժեքի տոկոսային մաս: Օրինակ, Բելգիայում ԳևՓ ակտիվների (այդ թվում՝ շենքերի, սարքավորումների, արտոնագրերի ու ԳևՓ կապիտալացված ծախսեր) մասով ԳևՓ ներդրումների գծով լրացուցիչ նվազեցումներ են արվում 13,5% կամ 20,5%-ի չափով:
3. Եկամուտների վրա հիմնված ԳևՓ գծով հարկային արտոնությունները հաշվարկվում են որպես համապատասխան եկամուտի տոկոսային մաս: Օրինակ՝ Լյուքսեմբուրգում մտավոր սեփականության հարկը հաշվարկվում է որպես ստացված համապատասխան եկամուտի (ներառյալ արտոնագրերի) տոկոս:

ԳևՓ գծով հարկային արտոնությունների քաղաքականությունը Հայաստանում դեռևս զարգացման փուլում է: Ինչպես արդեն նշվել է գեկույցում, 2014 թվականին հարկային արտոնությունների վերաբերյալ փաթեթը ներկայացվել է Խորհրդարան, որով աննախադեպ բարենպաստ պայմաններ են ստեղծվում ՏՏ ոլորտի զարգացման համար, այն է՝ նոր ստեղծվող ընկերությունների համար եկամտահարկը կազմելու է ընդամենը 10%, իսկ շահութահարկը՝ 0%, և նրանք կարող են այս արտոնություններից օգտվել երեք տարի:

Միննույն ժամանակ, օտարերկրյա ներդրողները կարող են հարկային արտոնություններ ստանալ՝ իրենց ընկերությունները «Ազատ տնտեսական գոտում» տեղակայելով: 2011թ.-ի հունիս ամսին ընդունվեց «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, իսկ 2011 թվականի վերջին գործողության մեջ դրվեցին մի շարք կարևոր ենթաօրենսդրական ակտեր: Հայաստանի կառավարությունը հույս ունի ներգրավելու արտաքին ներդրողների և հայտարարել է երկու հավանական ԱՏԳ-ները, որոնցից մեկը Զվարթնոց միջազգային օդանավակայանում է, իսկ մյուսը՝ «Մարա» ՓԲԸ-ում (որը ներառում է նախկինում շատ

հայտնի «Մերգելյան ինստիտուտի»՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի տարածքը):

Այս երկու ազատ տնտեսական գոտիների գործունեության հիմնական ուղղությունը կլինի համապատասխանաբար ագրոքիզնեսը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Ստորև ներկայացվում է Հայաստանի տարածքում ստեղծված ազատ առևտրի գոտիներում կատարվող գործառնությունների հետ կապված արտոնությունների/խրախուսանքների ցանկը.

- Հայաստանի տարածքի ազատ առևտրի գոտում շահառուների գործունեությունից հարկվող եկամտահարկը նվազեցվում է 100%-ով,
- ազատ տնտեսական գոտու ոչ ռեզիդենտ շահառուները ենթակա չեն հարկան իրենց հայաստանյան եկամտի նկատմամբ,
- ազատ առևտրի գոտում ապրանքների առաքումը, ինչպես նաև ծառայությունների տրամադրումը ազատ գոտու կազմակերպիչների և շահառուների համար ազատված է ԱԱՀ-ից
- ազատ առևտրի գոտում կազմակերպական գործառնությունների և դրանց իրականացման համար լիցենզավորում չի պահանջվում:

6. Կրթական ոլորտ

6.1 Ընդհանուր նկարագրություն

Հայաստանում S2S ոլորտի կայուն զարգացումը պայմանավորված է ոլորտում աշխատող տեխնիկական և կառավարման գծով բարձրակարգ մասնագետների առկայությամբ:

Տասնամյակներ շարունակ Հայաստանի ԲՈՒՀ-երում իրականացվող կրթական ծրագրերի շնորհիվ Հայաստանում աշխատանքի շուկան համալրվում է բարձր պահանջարկ ունեցող աշխատուժով: Հիմնարար գիտելիքներ ստանալու հետ միասին ԲՈՒՀ-երում ուսանողների համար կարևորվում է նաև ուսումնական պրակտիկան: Այսօր այդ ԲՈՒՀ-երի կողմից կիրառվող ուսումնական մեթոդոլոգիաները լրացվում են նոր գաղափարներով ու ամրապնդվում միջազգային ճանաչում ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների լավագույն ավանդույթներով և մոտեցումներով, ինչը Հայաստանում ազատ շուկայական սկզբունքների տարածման արդյունք է:

2013-2014թթ. Հայաստանի ԲՈՒՀ-եր⁴ մոտ 8500 ուսանողներ են ընդունվել տարբեր մասնագիտական ուղղություններով: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը (ՀՊՃՀ) և Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) ՏՏ ոլորտի տեխնիկական

⁴Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am

մասնագետների պատրաստման ամենախոշոր հաստատություններն են Հայաստանում: SS ոլորտում մասնագիտական կրթություն առաջարկող այլ հիմնական հաստատություններն են

Աղյուսակ 10. SS մասնագիտացումներ առաջարկող ԲՈՒՀ-երը և ֆակուլտետները

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	Ռադիոտեխնիկայի և կապի համակարգերի ֆակուլտետ
	Կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի ֆակուլտետ
	Մեխանիկամեքենագիտական ֆակուլտետ
Երևանի պետական համալսարան	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ
	Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ
	Ֆիզիկայի ֆակուլտետ
	Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ
Հայաստանի ամերիկյան համալսարան	Ճարտարագիտության ֆակուլտետ
Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա	Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետ
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան	Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտ
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Կիբեռնետիկայի ֆակուլտետ
	Համակարգչային համակարգերի և ինֆորմատիկայի բաժին
Հայաստանում Ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտ	Տեղեկատվական համակարգերի կառավարման ֆակուլտետ

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան (ԵԿՏԱ) և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը (ՀՌՀ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՀՀԱՀ) և Հայաստանում Ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտը (ՀՖԲԻԻ):

Հետազոտության մեջ ընգրկվել են նշված ԲՈՒՀ-երում SS մասնագիտացումներ առաջարկող ֆակուլտետների 13 ներկայացուցիչներ (տես Աղյուսակ 10):


Բացառությամբ Հայաստանում Ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտի, որը նոր ստեղծված բարձրագույն ուսումնական հաստատություն է Հայաստանում և քիչ թվով ուսանողներ ունի, հետազոտության մեջ ընդգրկված մյուս կրթական հաստատությունները համարվում են Հայաստանում ՏՀՏ ոլորտում մասնագիտություններ առաջարկող հիմնական ԲՈՒՀ-երը:

Ըստ վեց հիմնական ԲՈՒՀ-երից ստացած տվյալների՝ այսօր ՏՀՏ ոլորտին առնչվող ֆակուլտետներում աշխատում են պրոֆեսորադասախոսական կազմի 981 մասնագետներ:

2013-2014թթ. Հայաստանում SS առնչվող մասնագիտություններով վերը նշված վեց ԲՈՒՀ-երում սովորել է շուրջ 5156 ուսանող: Այդ ուսանողներից գրեթե 60%-ը սովորում են ՀՊՃՀ-ում և ԵՊՀ-ում:

6.2 Բարձրագույն ուսումնական հաստատություններ

2013-2014թթ. ուսումնական տարում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող մասնագիտացումներով սովորող ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 8489 ուսանող, որը ՀՀ ԲՈՒՀ-երում սովորող ուսանողների ընդհանուր թվի (85922) 9.9%-ն է կազմում: Իսկ տնտեսագիտության և կառավարման մասնագիտացմամբ սովորող ուսանողները Հայաստանյան ԲՈՒՀ-երի սովորողների գրեթե 19%-ն են կազմում:



Հայաստանի պետական ճարտարագիտական (ՀՊՃՀ) և Երևանի պետական համալսարանները (ԵՊՀ) ՏՀՏ ոլորտի տեխնիկական մասնագետների պատրաստման ամենահին ու խոշոր հաստատություններն են Հայաստանում: ՏՀՏ ոլորտում մասնագիտական կրթություն առաջարկող այլ հիմնական հաստատություններից նաև Ճարտարապետության և

շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ), Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան (ԵԿՏԱ) և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը (ՀՌՀ):

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (ՀՊՃՀ)

ՀՊՃՀ-ն 1933 թվականին հիմնադրված Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի իրավահաջորդն է: ԲՈԻՀ-ը կրթական տարբեր ծրագրեր է առաջարկում ճարտարագիտության, գիտությունների և տեխնոլոգիաների տարբեր մասնագիտություններով և համարվում է տեխնիկական մասնագետներ պատրաստող հիմնական ուսումնական հաստատությունը



Հայաստանում: Համալսարանը նաև մասնաճյուղեր ունի Հայաստանի այլ մարզերում: Այսօր ՀՊՃՀ-ի ուսանողների ընդհանուր թիվը հասնում է 10000-ի⁵, իսկ հիմնադրման օրվանից ԲՈԻՀ-ը տվել է ավելի քան 120000 շրջանավարտ: 1960թ. ՀՊՃՀ-ում սկսեցին դասավանդել համակարգչային դասընթացներ, երբ բացվեցին կիբեռնետիկայի, հաշվողական համակարգերի և ռադիոտեխնիկայի ֆակուլտետը (որը հետագայում բաժանվեց երեք առանձին ֆակուլտետների): Այսօր վերը նշված ֆակուլտետները առաջարկում են տարբեր մասնագիտացումներ, այդ թվում՝ համակարգիչների և համակարգչային տեխնիկայի նախագծում, ծրագրավորում, էլեկտրոնիկայի և միկրոսխեմաների նախագծում, ավտոմատ կառավարման համակարգեր և այլն: ՀՊՃՀ-ում իրականացվում են գիտահետազոտական աշխատանքներ տարբեր բնագավառներում՝ հաշվողական համակարգերի և ցանցերի նախագծում ու ներդրում, կիսահաղորդչային սարքերի հետազոտում և նախագծում, արհեստական բանականություն, դինամիկ համակարգերի հետազոտում և նախագծում, կառավարման համակարգերի անալիզ և սինթեզ, միկրոէլեկտրոնիկա, միկրոսխեմատեխնիկա և այլն:

Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)

Երևանի պետական համալսարանը, որը հիմնադրվել է 1919 թվականին, այսօր այն խոշորագույն ուսումնական հաստատությունն է, որն ունի ավելի քան 12000 ուսանողներ:⁶ Իր պատմության ընթացքում այս ուսումնական հաստատությունը տվել է մոտ 100000 շրջանավարտ: ԵՊՀ-ում առաջարկվում են կրթական ծրագրեր տարբեր մասնագիտացումներով, այդ թվում՝ կենսաբանության, տնտեսագիտության, պատմության,

⁵Աղբյուրը՝ ՀՊՃՀ, <http://www.seua.am>

⁶Աղբյուրը՝ ԵՊՀ, <http://www.ysu.am>

լեզվաբանության, իրավագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և այլ գիտությունների: Ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետը հիմնադրվել է 1924թ., իսկ 1971թ. բացվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: Այս ֆակուլտետները պատրաստում են մասնագետներ SS-ին առնչվող հետևյալ ոլորտներում՝ ալգորիթմիկ լեզուներ, կիբեռնետիկա, դիսկրետ մաթեմատիկա, համակարգերի ծրագրավորում և մոդելավորում և այլն:



ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) կրթական և հետազոտական կենտրոնը ստեղծվել է 2007թ.-ին՝ SS ոլորտում կրթական, մասնագիտական ուսուցման, շարունակական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանի կրթական ծրագրերի կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման նպատակով: Բացի ավանդական ձևերից՝ կենտրոնի դասավանդման փորձառությունը ընդգրկում է նաև առցանց և հեռավար եղանակները, ինչպես նաև ուսուցման զուգակցված ձևերը: Կենտրոնը իրականացնում է երեք մագիստրոսական ծրագիր տեղեկատվական տեխնոլոգիաների հետևյալ ուղղություններով՝ տեղեկատվական համակարգերի մշակում, տեղեկատվական համակարգերի կառավարում, վիզուալ հաշվարկ:

Կենտրոնը նաև իրականացնում է խորացված մասնագիտական ուսուցման ծրագրեր, որոնք անմիջապես ուղղված են SS ոլորտի պահանջների բավարարմանը: Կենտրոնի նվաճումներից է նոր կրթական տեխնոլոգիաների ակտիվ ներդրումը ուսումնական գործընթացում: Այն ընդգրկում է, մասնավորապես, Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից ֆինանսավորվող «Հայկական վիրտուալ համալսարան» նախագծի մշակումը, ԵՊՀ, ՀՊՃՀ և ՀՌՀ (Սլավոնական) համալսարանների համար էլեկտրոնային համակարգի միջոցով կառավարվող ու հեռավար եղանակով աշխատանքի հնարավորություն ունեցող մուլտիմեդիա կուրսերի մշակումը: Վերջինս ֆինանսավորվում է «Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան»-ի կողմից:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Հայաստանում բարձրագույն ճարտարապետաշինարարական կրթությունը սկիզբ է առել 1921 թվականի հոկտեմբերից՝ Երևանի պետական համալսարանի ստեղծման հետ միասին, որի տեխնիկական ֆակուլտետում բացվել էին ինժեներաճարտարապետական և ինժեներահիդրոտեխնիկական մասնագիտությունները:

1933 թվականի փետրվարին Շինարարական ինստիտուտը վերակազմավորվեց պոլիտեխնիկականի՝ ընդգրկելով նաև մինչ այդ առանձին գոյություն ունեցող քիմիատեխնոլոգիական ինստիտուտը:

Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետից մինչև ներկայիս Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանն ընկած 86 տարիների իր պատմության ընթացքում ուսումնական հաստատությունը տվել է շուրջ 30,000⁷ շրջանավարտ:

⁷Աղբյուրը՝ ՃՀՀԱՀ, <http://www.ysuac.am/>

Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)

Կալիֆորնիայի համալսարանի մասնաճյուղ հանդիսացող Հայաստանի ամերիկյան համալսարանը ստեղծվել է 1991թ.⁸ առաջարկելով միայն հետբուհական կրթական ծրագրեր, որոնք համաատասխանում էին ԱՄՆ կրթական համակարգին: ՀԱՀ-ը պատրաստում է մագիստրոսներ բիզնեսի կառավարման, ինֆորմատիկայի, ճարտարագիտության,



իրավաբանության և այլ մասնագիտություններով: 2013թ-ից ԲՈՒՀ-ը նաև բակալավրիատի ծրագրեր է առաջարկում հաշվողական տեխնիկայի համակարգերի տեսություն մասնագիտությամբ: Համալսարանում գործող հետազոտական կենտրոններում անցկացվում են հետազոտություններ հետևյալ ոլորտներում՝ բիզնես, ճարտարագիտություն, շրջակա միջավայր, առողջապահություն, իրավաբանություն և քաղաքագիտություն:

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա (ԵԿՏԱ)

ԵԿՏԱ-ն հիմնադրվել է 2001թ. Եվրամիության կողմից: Այն պատրաստում է ծրագրավորման և SS բիզնեսի կառավարման մասնագետներ: Ակադեմիայի կրթական ծրագրերում մասնագիտական դասընթացներին զուգահեռ նախատեսված է երեք օտար լեզուների՝ անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի ուսուցում: Այժմ, վերը նշված ֆակուլտետներում սովորում են շուրջ 250 ուսանողներ⁸:

Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարան (ՀՌՀ)

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը հիմնադրվել է 1997 թվականի օգոստոսի 29-ին Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրի հիման վրա: 1999թ. ՀՌՀ-ի կողմից առաջարկվող մասնագիտությունների ցանկը համալրվեց մասնավորապես «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» մասնագիտացումով, իսկ 2003թ. բացվեց ֆիզիկատեխնիկական ֆակուլտետը:

Ֆակուլտետներում առաջարկվում է մաթեմատիկայի և մաթեմատիկական մոդելավորման, համակարգերի ծրագրավորման, էլեկտրոնիկայի և միկրոէլեկտրոնիկայի մասնագիտական կրթություն: 2012թ.-ին համալսարանի նույն բնագավառի ֆակուլտետները միավորվեցին՝ դառնալով առանձին ինստիտուտներ: Ներկայումս ՀՌՀ-ում տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտում մասնագիտական կարողությունների զարգացմամբ զբաղվում է Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտը, որը ունի հետևյալ մասնագիտացումները՝ կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա, էլեկտրոնիկա և

⁸Աղբյուրը՝ ԵԿՏԱ, <http://www.era.am/>

նանտելեկտրոնիկա, հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ և կապի համակարգեր, էլեկտրոնային միջոցների տեխնոլոգիա և նախագծում, բժշկական բիոքիմիա, դեղագործություն, բիոինժեներական գիտություն և բիոինֆորմատիկա: Նշված ՏՀՏ ուղղություններով ՀՌՀ-ում սովորում են շուրջ 422 ուսանողներ:


Բացառությամբ մի քանի ԲՈՒՀ-երի՝ գործող կրթական համակարգը նախկին Խորհրդային Միությունից մնացած ժառանգությունն է: Անկախությունից հետո մասնագետների պահանջարկը կտրուկ փոխվեց, ինչը հանգեցրեց բազմաթիվ բնագավառների ու մասնագիտությունների վերացմանն ու նորերի առաջացմանը: Արդեն բազմաթիվ ԲՈՒՀ-եր անցել են արևմտյան երկաստիճան կրթական համակարգի՝ բակալավրի և մագիստրոսի կոչումներով, այդուհանդերձ որոշ ԲՈՒՀ-երում դեռևս պահպանվում է Խորհրդային Միության հնգամյա բարձրագույն կրթությունը: Շատ ԲՈՒՀ-եր տրամադրում են գիտությունների թեկնածուի և դոկտորի կոչումներ:

Կրթական ոլորտի առջև ծառացած հիմնական խնդիրը ոչ բավարար ֆինանսավորումն է, քանի որ ուսման վարձերը և պետության օժանդակությունը չեն բավականացնում կրթական հաստատությունների մեծամասնությանը, իսկ մասնավոր հատվածը գրեթե չի մասնակցում կրթական ծրագրերի ֆինանսավորման գործընթացին: Միաժամանակ, շատ ԲՈՒՀ-եր ի վիճակի չեն բարձրացնելու ուսման վարձերը, քանզի այն բարձր է միջին հայ ուսանողի համար: ԲՈՒՀ-երի զարգացմանը խոչընդոտում են նաև դասագրքերի ու մասնագիտական գրականության բացակայությունը, մասնավոր հատվածի հետ համագործակցության դժվարությունները, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ տարիքով անդամներին փոխարինող նոր մասնագետների ներգրավման դժվարությունները: Որոշ ԲՈՒՀ-երում մինչ այժմ առկա են խնդիրներ՝ կապված ինտերնետի հասանելիության և համակարգիչների ոչ բավարար քանակի հետ:

6.3 Պրոֆեսորադասախոսական կազմ և ուսումնական մեթոդներ

ՏՀՏ-ին առնչվող մասնագիտություններ առաջարկող ԲՈՒՀ-երի դասախոսների մեծ մասը կենտրոնացած է ԵՊՀ-ում և ՀՊՃՀ-ում, իսկ մյուսները՝ մնացած ուսումնական հաստատություններում: Ընդհանուր առմամբ, վեց առաջատար ԲՈՒՀ-երում դասավանդում են 974 մասնագետներ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի բաշխվածությունը Հայաստանի վեց առաջատար ԲՈՒՀ-երում 2014 թվականի դրությամբ



Հարկ է նշել, որ բարձրագույն կրթօջախների մեծ մասն իրենց ուսումնական ծրագրերն ու մեթոդները համարում են ժամանակակից և ոլորտի արդի պահանջներին համապատասխան:

Շատ դասախոսներ օգտագործում են Եվրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ առաջատար համալսարանների փորձը՝ հենց նրանց օժանդակությամբ: Շատ դեպքերում ԲՈԻՀ-եր են հրավիրվում տեղական ՏՏ մասնագետներ՝ ուսումնական ծրագրերը ոլորտի վերջին միտումներին ու պահանջներին համապատասխանեցնելու հարցում օժանդակելու համար:

Այսօր արդեն ԲՈԻՀ-երի մեծամասնությունը ընդունում է, որ տեխնիկական հմտություններից բացի ուսանողներին նաև հարկավոր են գործարար գիտելիքներ: Մի շարք ԲՈԻՀ-երում սորամադրվում են գործարարությանը, ինչպես օրինակ՝ մարքեթինգին, կառավարմանը, բիզնես էթիկային, իրավագիտությանը և այլ հարցերին առնչվող դասընթացներ: Օտար լեզուների՝ մասնավորապես ռուսերենի և անգլերենի դասավանդումը նույնպես մեծապես կարևորվում է տեխնիկական և կառավարման բարձրակարգ կադրերի պատրաստման գործում:

Չնայած կրթական համակարգի վերջին բարեփոխումներին՝ դասավանդման արդի մեթոդները չեն համապատասխանում այն պահանջներին, որոնք ներկայացվում են ՏՏ ոլորտի բարձրակարգ կադրերին: Ավելին, համակարգում առկա երկու փոխկապակցված խնդիրները՝ պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ցածր վարձատրությունը և մեծ տարիքը, հանգեցրել են այնպիսի իրավիճակի, որ համակարգը լճացել է կամ նույնիսկ ինքն իրեն սպառել, մինչդեռ ուսանողների թիվը տարեցտարի աճում է:

6.4 Ուսանողներ

2013-2014թթ. Հայաստանում SS մասնագիտություններ առաջարկող ԲՈՒՀ-երում սովորել է 8489 ուսանող⁹, որոնցից 5156 -ը սովորում են վերը նշված վեց հիմնական ԲՈՒՀ-երում: Այդ ուսանողներից մոտ 60%-ը սովորում են ԵՊՀ-ում և ՀՊՃՀ-ում: Հայաստանում սովորող օտարերկրացի ուսանողները, որոնց թիվն անընդհատ աճում է, հիմնականում ԱՊՀ-ից են, Մերձավոր Արևելքից, Եվրոպայից և այլ երկրներից: Վերջին 3-6 տարիների ընթացքում ուսանողների առաջադիմությունը բարձրացել է և SS-ին առնչվող ֆակուլտետներ ընդունվելը բավականին բարդացել է՝ հատկապես ԵՊՀ-ում և ՀՊՃՀ-ում: Համակարգչային գիտությունը, կիրառական մաթեմատիկան, տեղեկատվական տեխնոլոգիաները և տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, ինչպես նաև ավտոմատ հսկիչ համակարգերն ու միկրոէլեկտրոնիկան ամենատարածված մասնագիտացումներն են դիմորդների շրջանում:

Ընդհանուր առմամբ, SS ընկերությունների ներկայացուցիչները համարում են, որ ուսանողների ներկա թիվը չի բավարարում ոլորտի տեխնիկական մասնագետների պահանջարկը, որը միջինում կազմում է 2000 մարդ: Նրանք մատնանշում են նաև, որ որոշ շրջանավարտների որակավորման մակարդակը չի համապատասխանում ոլորտի պահանջներին և շատերին անհրաժեշտ է անցնել լրացուցիչ աշխատանքային վերապատրաստում՝ անհրաժեշտ որակավորում ստանալու և լրիվ դրույքով աշխատատեղեր զբաղեցնելու համար:

6.5 Համագործակցություն մասնավոր հատվածի հետ

Խորհրդային Միության փլուզման հաջորդած ժամանակահատվածում SS ոլորտի և ԲՈՒՀ-երի միջև համագործակցությունը բավականին թույլ էր: Սակայն վերջին ժամանակներում որոշ դրական տեղաշարժ է արձանագրվել այս ուղղությամբ, ինչի մասին են վկայում հետևյալ փաստերը՝

- LEDA Systems (2004թ. ձեռք է բերվել Synopsys Inc. ընկերության կողմից) ընկերության և ՀՊՃՀ-ի կողմից ստեղծվել է «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» միջֆակուլտետային ամբիոնը: Այս ամբիոնը, որն այժմ «Synopsys» ընկերության բուհական ծրագրի մի մասն է կազմում, տարեկան պատրաստում է VLSI և EDA ոլորտներում ավելի քան 60 բարձրակարգ մասնագետներ: Այս նախաձեռնության շրջանակներում «Synopsys» ընկերությունը բացել է միջֆակուլտետային ամբիոններ ԵՊՀ-ում և Սլավոնական համալսարանում:
- 2005թ. ՀՊՃՀ-ում և ԵՊՀ-ում Lycos Europe, ՁԻՀ-ի և «Սոբսիո» ՓԲԸ կողմից ստեղծվել են ինտերնետային և վեբ տեխնոլոգիաների լաբորատորիաներ:
- SUN ուսումնական լաբորատորիաներ են ստեղծվել «SUN Microsystems» ընկերության, ՁԻՀ-ի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ՀՊՃՀ-ում, ԵՊՀ-ում և Սլավոնական համալսարանում 2008 թվականին:

⁹ Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն, <http://www.armstat.am>

- 2006 թվականին հիմնադրվել է Գյումրիի SS կենտրոնը՝ առաջին SS ուսումնական կենտրոնը Հայաստանի երկրորդ քաղաքում: Ստեղծվել է Հայ օգնության հիմնադրամի և ՁԻՀ-ի կողմից:
- Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հիմնում, որը ստեղծվել է Մայքրոսոֆթ ընկերության, ՁԻՀ-ի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ՀՊՃՀ-ի կողմից:
- Հայ-հնդկական S2S գերազանցության կենտրոնի հիմնում, որը ստեղծվել է Հայաստանի կառավարության և Հնդկաստանի կառավարության համատեղ ծրագրի շրջանակներում 2011 թվականին:
- Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ Օրագրերի Տարածաշրջանային Լաբորատորիայի հիմնում, որը ստեղծվել 2011թ. InfoDev կազմակերպության, Ֆինլանդիայի Կառավարության և «Նոկիա» ընկերության համատեղ ծրագրի շրջանակներում:
- 2013թ.-ին Նեյշնլ Ինսթրումենթս ընկերության հետ համատեղ Հայաստանի ազգային ինժեներական լաբորատորիայի ստեղծում ՀՊՃՀ-ում:
- 2013թ.-ին IBM ընկերության հետ համատեղ մեկնարկել է ակադեմիական նախաձեռնության ծրագիրը, իսկ IBM նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը ստեղծվելու է ԵՊՀ-ում 2015 թվականին:
- «Samsung» ընկերության և ԵՊՀ-ի համատեղ ջանքերով 2014թ. ԵՊՀ-ում բացվել է «Samsung» կրթական կենտրոնը:


Նշված ընկերությունների կողմից աշխատանքի են ընդունում հատուկ մշակված ուսումնական ծրագրերի շրջանավարտները: Ներկայումս, ոլորտի և ԲՈՒՀ-երի համագործակցությունը սահմանափակվում է ուսումնական ծրագրերով ու վերապատրաստման դասընթացներով, որոնց հիմնական նպատակը կոնկրետ ընկերությունների և ընդհանուր առմամբ ոլորտի համար բարձրակարգ մասնագետներ պատրաստելն է:

7. S2S ոլորտի աշխատուժի կառուցվածքը

Մարդկային ռեսուրսներն, անկասկած, Հայաստանի S2S ոլորտի մրցակցային ամենակարևոր առավելություններից են: Օտարերկրյա ներդրողների համար գրավիչ է ոչ միայն աշխատուժի ցածր վարձատրությունը, այլ նաև հայ մասնագետների բարձր արտադրողականությունը: 2014թ. SS ոլորտում զբաղվածների թիվը հասել է 11564-ի, ինչի արդյունքում մոտ 10% աճ է արձանագրվում 2013թ.-ի համեմատ: Տեխնիկական մասնագետների թիվը հասել է 9,567-ի, որոնց շարքում են ծրագրային ապահովման ճարտարագետները, վերլուծաբանները, ծրագրավորողները, SS ծրագրերի ղեկավարները և այլն:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ և ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱԺՆԵՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

■ Տեղական ■ Օտարերկրյա




Տեխնիկական աշխատուժի արտադրողականությունը օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններում աճել է 5%-ով՝ համեմատած 2013թ.-ի հետ, հասնելով մեկ աշխատողի հաշվով 45,923 ԱՄՆ դոլարի, իսկ տեղական ընկերություններում աշխատողների արտադրողականության հարցում առանձնապես խոշոր տեղաշարժեր չեն արձանագրվել և յն կազմում է 30,500 ԱՄՆ դոլար, ինչպես և նախորդ տարի:

SՀՏ ոլորտում աշխատող 9,567 տեխնիկական մասնագետների 48%-ն աշխատում է հեռահաղորդակցության ոլորտում, մինչդեռ մնացած տեխնիկական աշխատուժն աշխատում է ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում:

Ինչպես երևում է գծապատկերից, 2013թ.-ի համեմատ 2014թ.-ին դեկավար և բիզնես մասնագետների մասնաբաժինն ընդհանուր ՏՏ աշխատուժի մեջ աճել է և՛ տեղական, և՛ արտասահմանյան բաժնեմասնակցությամբ ընկերություններում: Ակնհայտ է, որ օտարերկրյա ընկերություններում աճի ավելի մեծ ծավալներ են արձանագրվել, քան տեղական ընկերություններում, ինչը ցույց է տալիս, որ օտարերկրյա ընկերությունները մեծացնում են Հայաստանում իրենց ներկայության մասշտաբները:

2013թ. տվյալներով Հայաստանի SՀՏ ոլորտում աշխատողների 63%-ը մագիստրոսի կամ ավելի բարձր աստիճան ունի: Ուսանողները կազմում են SՀՏ աշխատուժի 36%-ը: Չնայած տեղական ընկերությունների կողմից կադրերի վերապատրաստումը համարվում է իրենց զարգացման կարևորագույն բաղադրիչ՝ նրանցից քչերն են ի վիճակի ապահովել աշխատակիցների շարունակական վերապատրաստման գործընթացը: Այս հարցում մեծ դեր է խաղում




անհրաժեշտ միջոցների ու համապատասխան անձնակազմի առկայությունը: Շատ ընկերություններում ԲՈՒՀ-երի նոր շրջանավարտներն անցնում են չվարձատրվող աշխատանքային պրակտիկա: Ընդունված է, որ պրակտիկա անցնողները նախ վերապատրաստվում են, ընդգրկվում են ընկերության ոչ առաջնային գործունեության մեջ, այնուհետև նրանցից լավագույններն ընտրվում են մշտական աշխատանքի: Նորեկ աշխատողները սովորաբար աշխատանքի են անցնում միայն երկուսից ավելի ամիս անց:

Հայկական ՏՀՏ ոլորտում աշխատակիցների մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներն են (66%): Ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի կին աշխատողների քանակը 2013թ.-ի համեմատ ավելացել է 3%-ով:

Հետազոտության ընտրանքում ընդգրկված ընկերությունների տնօրենների միջին աշխատանքային փորձը 18.9 տարի է տեղական ընկերություններում և 17.4 տարի՝ օտարերկրյա ընկերություններում: Մնացած աշխատողների միջին աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև:

Միջին աշխատանքային փորձը Հայաստանի ՏՀՏ ընկերություններում՝ ըստ տարիների



Տեղական և օտարերկրյա ընկերություններում աշխատում է ամբողջ աշխատուժի համապատասխանաբար 44% և 56%-ը (2008թ. այս հարաբերակցությունը եղել է 50/50), ինչը նշանակում է, որ տեղական ընկերություններում զբաղված աշխատողների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 1%-ով:

Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերությունների աշխատակիցների միջին թիվը (թվաքանակյա միջին) 55 աշխատակից է, իսկ տեղական ընկերությունների աշխատակիցների միջին թիվը՝ 18:


Ծրագրավորման օֆշորային գործունեության համար Հայաստանը դեռ համարվում է ցածր ծախսեր պահանջող երկիր, որտեղ վարձատրություններն իրենց չափով չեն զիջում ՏՏ ոլորտի աշխատանքների արտապատվիրման հիմնական երկրներին, ինչպիսիք են, օրինակ, Հնդկաստանը, Ռուսաստանը, Իսրայելը, Իռլանդիան և Չինաստանը:

Տեղական ընկերություններում կրտսեր տեխնիկական աշխատողի միջին աշխատավարձը տատանվում է 250-300 ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ ավագ մասնագետների աշխատավարձը հասնում է 3000 ԱՄՆ դոլարի: Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններում տեխնիկական մասնագետի աշխատավարձի չափը կազմում է 400-ից 3500 ԱՄՆ դոլար:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տեխնիկական աշխատողների աշխատավարձի չափը պայմանավորվում է ոչ թե կրթական աստիճանով, այլ աշխատանքային փորձով:

Ընկերությունների բաշխումն ըստ նրանց աշխատակիցների թվի 2014 թվկանի համար էականորեն չի տարբերվում նախորդ տարվա ցուցանիշներից: Ինչպես և 2013թ.-ին, ոլորտի ընկերություններում զբաղված մասնագետների թիվը զգալիորեն տատանվում է: Ընկերությունների ընդամենը 5%-ում են աշխատում 100 և ավելի մասնագետներ, ինչը կազմում է ամբողջ աշխատուժի 47%-ը, իսկ 78%-ում՝ 25-ից պակաս մասնագետներ, ինչը կազմում է ամբողջ աշխատուժի 30%-ը:

Այսպիսով, ներքևում բերված գծապատկերից երևում է, որ Հայաստանում S2S ընկերությունների շարքում՝ ըստ աշխատուժի, գերակշռում են փոքր ձեռնարկությունները, ինչը հանդիսանում է ոլորտի արտադրողականության վրա բացասաբար ազդող գործոններից մեկը:



Օտարերկրյա մասնաճյուղերի ռազմավարության շրջանակներում նախատեսվում է աշխատակիցների մշտական վերապատրաստում ինչպես Հայաստանում, այնպես էլ գլխամասային ընկերություններում: Ավելին, մասնաճյուղերում հիմնադրվել են ռեսուրսների հատուկ կենտրոններ ու գրադարաններ, որտեղ կատարելագործվում և վերապատրաստվում են աշխատակիցները: Արտասահմանյան մի շարք ընկերությունների աշխատակիցներ հնարավորություն ունեն դառնալու գործատու ընկերության բաժնետերեր և աշխատավարձից բացի ստանալու այլ տեսակի խրախուսումներ: Վերջին երեք տարիների ընթացքում նման նախաձեռնություններ հանդիպում են նաև տեղական ընկերություններում:

8. ՏՀՏ ոլորտի դերը Հայաստանի տնտեսության մեջ

8.1 Զարգացման միտումներ և հեռանկարներ

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարելի է ասել, որ ՏՏ ոլորտը հսկայական արտահանման ներուժ ունի և որպես այդպիսին կարող է մեծ ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության աճի ու զարգացման գործում:

Այսօր հայաստանյան ՏՏ ընկերությունները կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող արտադրանք ու ծառայություններ: Սակայն դեռևս կան որոշակի խնդիրներ արտաքին շուկաներ դուրս գալու և ՏՏ ոլորտի համար մասնագետներ պատրաստելու հարցում: Այս տեսանկյունից կարևոր է կառավարության կողմից խրախուսման քաղաքականության և շարունակական աջակցման ծրագրերի իրականացումը:

2014 թվականին ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում ու ինտերնետ ծառայությունների պրովայդերների մոտ գոյացած եկամուտների ամսնաբաժինը Հայաստանի ՀՆԱ-ում կազմել է 4.3% (10.9 միլիարդ ԱՄՆ դոլար¹⁰):

2010-2014թթ. ընթացքում ոլորտում գրանցվել է 20.1% միջին տարեկան աճ: Ոլորտի մասնաբաժինը արտահանումների ընդհանուր ծավալում 2010թ. գրանցված 8%-ից աճել է՝ 2014 հասնելով մինչև 10%-ի¹¹, ինչը վկայում է Հայաստանի տնտեսության համար ծրագրավորման ոլորտի աճող նշանակության մասին, որը պայմանավորված է արտահանող ձեռնարկությունների զարգացմամբ ու ընդլայնմամբ:

ՏՀՏ ոլորտում տարեկան 1700 բարձր վարձատրվող աշխատատեղեր են ստեղծվում տեխնիկական մասնագետների համար: Մյուս կողմից, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում տարեկան պատրաստվում են տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի 2000 մասնագետներ, որոնցից լավագույնները, անցնելով որոշակի վերապատրաստում ընկերություններում, զբաղեցնում են այդ աշխատատեղերը:

Տեղական ընկերությունների մասնաբաժինը ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի ընդհանուր եկամուտների մեջ կազմում է մոտավորապես 45%, ինչը 7%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:


¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, <http://www.armstat.am>
ՀՆԱ-ն հաշվված է 2014թ.-ի առաջի 3 և 2013-ի 4րդ եռամսյակների հիման վրա

¹¹ 2014թ. արտահանման ցուցանիշների հիման վրա (ՀՀ Կենտրոնական բանկի տվյալներ)

Բացի տեղական S2S ընկերություններից Հայաստանում գործում են նաև օտարերկրյա ընկերությունների մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք հիմնականում արտապատվիրման/աուտսորսինգի կենտրոններ են՝ հստակ սահմանված բյուջեով, որոնց գործունեությունից ստացված եկամտի չնչին մասն է մնում երկրում՝ աշխատավարձերի և այլ ծախսերի տեսքով: Այնուամենայնիվ, մասնաճյուղերի գործունեության ներկա մոդելը դեռևս կարևոր դեր է խաղում Հայաստանի համար և ունի տեսանելի դրական ազդեցություն թե՛ ոլորտի, թե՛ ամբողջ տնտեսության վրա:

8.2. Ներքին շուկա

2014թ. ներքին շուկայի ծավալը հասել է մոտ 321.7 միլիոն ԱՄՆ դոլարի, կազմելով ոլորտի ընդհանուր ցուցանիշի 68%-ը, ինչը 3.2%-ով գերազանցում է 2013թ. գրանցված ներքին շուկայի մասնաբաժնի ցուցանիշը: Ընդհանուր առմամբ, ներքին շուկայում իրացման ծավալները 2010թ.-ից ի վեր աճել են ավելի քան 255%-ով, ինչը մեծապես պայմանավորված է ինտերնետային ծառայությունների ոլորտի զգալի աճով: Ծրագրային ապահովման սեգմենտի մասնաբաժինը ներքին շուկայում 74% է, իսկ ինտերնետ ծառայությունների սեգմենտի մասնաբաժինը կազմել է 26%՝ ապահովելով 125.7 միլիոն ԱՄՆ դոլար՝ շուկայի ընդհանուր եկամուտների մեջ: Ինտերնետ ծառայություններ մատուցող օտարերկրյա ընկերությունների մասնաբաժինը և ընդհանուր առմամբ ինտերնետային ծառայությունների շուկան զգալի մեծացել են հեռահաղորդակցության ոլորտի մենաշնորհը հանելու, ինտերնետ կապի նոր



խոշոր պրովայդերների շուկա մուտք գործելու և հեռահաղորդակցության ընկերությունների ձեռքբերման գործարքների արդյունքում: Նախորդ տարվա համեմատ՝ 2014թ. ներքին շուկայում շրջանառության ծավալն ավելի մեծ է եղել, քան արտահանումների ծավալը:

2014թ.-ին արտահանումը կազմել է ընդհանուր շրջանառության 44%-ը, իսկ եկամուտների 56%-ը գոյացել են ներքին շուկայում: Ինչպես երևում է գծապատկերից, տեղական շուկայում շրջանառության ծավալները կրկնապատկվել են վերջին չորս տարվա ընթացքում:

Պատճառը այլ բնագավառներում SS ոլորտի ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճն է: Ներքին շուկայում ծառայությունների պահանջարկի աճի միտում է նկատվում՝ թեև բավականին դանդաղ, ինչը պայմանավորված է որոշակի հանգամանքներով, որոնցից են ներքին շուկայի սահմանափակվածությունը, ցածր աշխատավարձերը, արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցների ցածր պահանջարկը, ֆինանսական խոչընդոտները, ծրագրային ապահովման անօրինական օգտագործման մեծ ծավալները (հենությունը) և այլ գործոններ:


Տեղական շուկայում հարաբերականորեն ցածր պահանջարկը քիչ է խրախուսում հայկական SՀS ոլորտի ընկերություններին՝ մշակելու փաթեթային ծրագրաշարեր կամ առաջարկելու նոր և ավելի որակյալ ծառայություններ: Տեղական շուկայում վաճառվող ծրագրային փաթեթների մեծամասնությունը կազմում են խոշոր ձեռնարկությունների և բանկերի համար հաշվապահական ու ֆինանսական ծրագրերը: Մեծ պահանջարկ ունեցող այլ արտադրանքների ու ծառայությունների թվում են նաև ձեռնարկությունների ռեսուրսների պլանավորման ծրագրային լուծումները, էլեկտրոնային առևտուրը, վեբ ծրագրավորման ծառայությունները, առողջապահության համար օժանդակ ծրագրերն ու հեռակա ուսուցման ծրագրերը:

8.3 Արտահանում

2014թ. արտահանման ծավալները զգալիորեն աճել են՝ հասնելով 153.2 միլիոն ԱՄՆ դոլարի, ինչը կազմում է ծրագրային ապահովման և ծառայություններ ոլորտի (առանց ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերությունների) եկամտի 44%-ը:

Արտահանման շուկայում շարունակում են գերիշխել օտարերկրյա ընկերությունները, որոնց բաժինը կազմում է 86%: Ծրագրային ապահովում և ծառայություններ ոլորտի խոշոր ձեռնարկությունները արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են, որոնք գրեթե ամբողջությամբ արտահանում են իրենց արտադրանքը: Բացի դրանից, շատ տեղական ընկերություններ նույնպես արտահանում են իրենց արտադրանքի և ծառայությունների զգալի մասը:

Արտահանման ուղղություններ, 2014



Հայկական SS ոլորտի կողմից գրեթե 153.2 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ արտադրանք և ծառայություններ են արտահանվում աշխարհի շատ երկրներ: SS ոլորտի ընկերությունները շուրջ 50%-ը արտահանում է սեփական արտադրանքն ու ծառայությունները, սակայն արտահանման տարբեր ծավալներով, որոշ ընկերությունների համար արտահանման ծավալները քիչ տոկոս են կազմում եկամտի մեջ, մինչդեռ այլ ընկերություններ ամբողջությամբ են (100%) արտահանում իրենց արտադրանքը:


Արտահանումների առավելագույն մասը՝ մոտ 78.6%-ը, ուղղվում է ԱՄՆ և Կանադա, 10.4%-ը՝ Եվրոպա, իսկ երրորդ տեղում Ռուսաստանը ու ԱՊՀ երկրներն են, որտեղ ուղղվում են արտահանումների 8.4%-ը: ԱՄՆ և Հյուսիսային Ամերիկա արտահանվող ծառայությունների մասնաբաժինը աճել է 8.6% 14%-ով, մինչդեռ Եվրոպա արտահանվող ծառայությունների մասնաբաժինը նվազել է 9.6%-ով 2014-ի ընթացքում: Այլ երկրների շարքում հայկական ծառայությունների նկատմամբ մեծ պահանջարկ է ներկայացնում ԱՄԷ-ն, որը հիմնականում արտապատվիրում է հարմարեցված ծրագրային ապահովման մշակման ծառայություններ:

Ընդհանուր առմամբ, արտահանման ծավալների աճը խոչընդոտող հիմնական գործոններն են միջազգային գործարար հանրության կողմից Հայաստանի և հայկական SS ոլորտի մասին ոչ լիարժեք իրազեկությունը, հիմնական SS շուկաներից հեռու գտնվելը, ինչպես նաև լեզվի արգելքները, որն չնայած սկսել է ավելի քիչ նանակություն ունենալ:

8.4 Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերություններ

2014թ.-ի տվյալներով Հայաստանում գործում են օտարերկրյա բաժնեմասնակցությամբ 157 ընկերություններ. այս թիվը կազմում է ոլորտի ընդհանուր ցուցանիշի 40%-ը: 2003թ.-ին այս ընկերությունները կազմում էին Հայաստանի ՏՀՏ ընկերությունների ընդամենը 22%-ը: Ոլորտի վարկանիշը շարունակում է բարձր ճանաչում ստանալ երկրի սահմաններից դուրս՝ ներգրավելով արտասահմանյան ներդրումներ ՏՀՏ ոլորտում:

Ինչպես և վերջին տարիների ընթացքում, օտարերկրյա ընկերությունների մեծամասնությունը կազմում են ամերիկյան ընկերությունները (42%): Այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 5%-ով: Օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ընկերությունների 32%-ը եվրոպական ընկերություններ են կամ ունեն եվրոպական բաժնեմասնակցություն:



Մեծամասամբ օտարերկրյա մասնաճյուղերը զուտ ծրագրավորման կենտրոններ են մայր ձեռնարկությունների համար: Սովորաբար դրանք հիմնվում են որպես ծրագրավորման փոքր կենտրոններ և, կազմավորելով արդյունավետ աշխատող թիմեր, սկսում են ընդլայնել աշխատակազմը և իրականացնել առավել բարձր հավելյալ արժեքով գործառնություններ Հայաստանում: Արդեն հազվագյուտ չեն այն դեպքերը, երբ այս կամ այն ընկերությունների տեխնիկական գործունեության ողջ ցիկլը (շրջափուլը) ի վերջո տեղափոխվում է Հայաստան, այդ թվում գիտահետազոտական, նախագծման, կողավորման, տեստավորման և այլ գործառնություններ: Բացի դրանից, որոշ ընկերություններ իրենց բիզնես գործառնությունների մի մասը, ինչպես օրինակ մարքեթինգը և հաճախորդների սպասարկումը, նույնպես տեղափոխում են Հայաստան: Լայնորեն տարածված է Հայաստանից դուրս գտնվող պատվիրատուների մոտ տեղական մասնագետների գործուղումները՝ ծրագրերի ներդրման և սպասարկման ծառայություններ տրամադրելու նպատակով:

8.5 Հաջողության և ձեռքբերումների օրինակներ

2004թ., 2005թ. և 2010թ. հայկական S2S ոլորտի միկրոսխեմաների նախագծման սեզոնն սկսվել է տեղի ունեցավ խոշոր գործարք երկու ընկերությունների միջև: Synopsys Inc. ընկերությունը, որը հանդիսանում է կիսահաղորդիչների նախագծման և արտադրության համար լուծումների մշակման ոլորտի առաջատարը, ձեռք բերեց LEDA Design, Monterey Arset, HPL Technologies և Virage Logic ընկերությունները: Synopsys-ին պատկանող ծրագրավորման նոր համատեղ կենտրոնը Հայաստանում այժմ ծրագրավորման ոլորտի ամենախոշոր տեղական ձեռնարկությունն է, որտեղ աշխատում են ավելի քան վեց հարյուր աշխատակիցներ:

Վերջին մի քանի տարիների ընթացքում գրանցվել են այլ դեպքեր, երբ ձեռք են բերվել գործող հայկական ընկերություններ, այդ թվում երեք պետական ձեռնարկություններ («Մարս» էլեկտրոնային գործարանը, Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտը և Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը), որոնք ՀՀ կառավարության կողմից վաճառվել են ռուսական ներդրողներին: Brienze ամերիկյան ընկերության հայկական մասնաճյուղը վաճառվել է Lycos Europe գերմանական ընկերությանը: Հայտնի է նաև Հայաստանում գիտահետազոտական կենտրոն ունեցող Ponte Solutions ամերիկյան ընկերության ձեռքբերումը Mentor Graphics ԱՄՆ կորպորացիայի կողմից:



2011թ. ամռանը Գյումրիում բացվել է D-Link International կազմակերպության ծրագրային մշակումների տարածաշրջանային լաբորատորիան, որը հետագայում դառնալու է Գյումրու տեխնոպարկի կարևորագույն բաղադրիչներից մեկը: D-Link International-ը թայվանական ընկերություն է, որը ցանցային և հեռահաղորդակցային սարքավորումների արտադրության և վաճառքի համաշխարհային առաջատարներից է և ներկայացված է աշխարհի ավելի քան 100 երկրներում:

2011թ.-ի աշնանը պաշտոնապես ազդարարվեց աշխարհի խոշոր ինժեներական կազմակերպություններից մեկի՝ սինգապուրյան ST Kinetics (Singapore Technologies Kinetics Ltd) ընկերության մուտքը Հայաստան: ST Kinetics-ը Հայաստանում բացել է մասնաճյուղ, որը կգրավի հետազոտություններով և մշակմամբ՝ ավտոնոմ մեքենաների ու ավտոնոմ սարքավորումների պլատֆորմի մշակման ուղղությամբ:



2011 թվականի հոկտեմբերի 25-ին «GFI Software» ընկերության կողմից հայտարարվեց «Monitis» հայաստանյան նորաստեղծ ընկերության ձեռքբերման մասին, որը ամպային ծառայությունների և մոնիթորինգի համակարգերի մասով առաջատարներից է: Ինչպես նշվել էր GFI ընկերության պաշտոնյաների կողմից, այդ ձեռքբերումը նպատակ ունի էլ ավելի ուժեղացնել GFI-ի կարողությունները փոքր և միջին ձեռնարկությունների համար SS վերահսկողության մատչելի համակարգերի ապահովման գործում և մեկ պատուհանի սկզբունքով գործող համակարգ կլինի SS ենթակառուցվածքների համար թե՛ շենքային, թե՛ սերվերային, և թե՛ ամպային հատվածում:



2014 թվականի նոյեմբերին «Cisco Systems Development» ընկերության նախագահ Մարիո Մացոլան Հայաստան կատարած իր այցելության ժամանակ հայտարարեց որ «Cisco Systems» ընկերությունը (որն ամերիկյան մուլտինացիոնալ կորպորացիա է Կալիֆորնիա նահանգի Սան Խոսե քաղաքում տեղակայված գլխավոր գրասենյակով և զբաղվում է ցանցային սարքավորումների նախագծմամբ, արտադրմամբ և վաճառքով) ձեռք է բերել «Memoir Systems»

հայկական ընկերությունը և իր գրասենյակը կբացի Հայաստանում: Այդ ձեռքբերումը, մասնագետների կարծիքով, թույլ կտա ավելացնել ASIC-Cisco կոմուտատորների և սխեմաների համար հասանելի և արագագործ հիշողության մեծ ծավալների արտադրությունը:



2014 թվականի հունիսի 20-ին ամերիկյան մուլտինացիոնալ՝ համակարգչային տեխնոլոգիաների ոլորտի առաջատար «Oracle» ընկերությունը հայտարարեց, որ համաձայնություն է ստորագրել LiveLOOK ընկերության ձեռքբերման մասին, ինչը կուժեղացնի Oracle-ի «cloud» ծառայությունների հատվածը քոբրատիվ գիտնականությամբ և կնպաստի հաճախորդներին էլ ավելի բարձրակարգ ծառայությունների տրամադրմանը իրական ժամանակում կատարվող գործողությունների հանարավորությամբ: Ձեռքբերման գործարքից հետո Oracle-ը որոշեց պահպանել LiveLOOK-ի գրասենյակը Երևանում՝ որպես գիտահետազոտական և փորձարարական ոլորտի իր մասնաճյուղ մաս, ինչի արդյունքում Oracle-ի առաջին գրասենյակը բացվեց Երևանում: Oracle ընկերության կողմից դեռ շարունակվում են Հայաստանում ընդայնվելու հնարավորությունների ուսումնասիրությունները: Իր ելույթում LiveLOOK ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն Իգոր Խալաթյանը նշել է, որ «Oracle» ընկերությունը պլանավորում է Հայաստանում գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների ոլորտում մասնագիտացած 200-300 անդամ ունեցող կենտրոն ունենալ:

9 Ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականությունը և հիմնական ձեռքբերումները

2000թ. ՀՀ կառավարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը հայտարարել է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը, որին հաջորդել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված այս որոշման իրականացմանը: 2001թ. ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, ԲՈՒՀ-երի, տարբեր հիմնադրամների և մասնավոր ձեռնարկությունների հետ համատեղ մշակել է SՀS գլխավոր ռազմավարությունն ու SՀS զարգացման ծրագիրը՝ ուղղված Հայաստանում SՀS ոլորտի հետագա զարգացմանն ու տարածաշրջանում Հայաստանը որպես SՀS կենտրոնի ճանաչմանը: 2001թ. մայիսին ՀՀ կառավարությունը հաստատել է Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հայեցակարգը և գործողությունների պլանը, որը մշակվել ու ներկայացվել էր ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից՝ հիմնված SՀS գլխավոր ռազմավարության սկզբունքների վրա:

2001թ. հուլիսին ՀՀ նախագահի որոշմամբ ստեղծվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (ՏՏՁԱԽ), որի նախագահը ՀՀ վարչապետն է: Խորհրդի առաքելությունն է այդ ոլորտում միջնորդ հանդիսանալ ՀՀ կառավարության ու մասնավոր հատվածի, ինչպես նաև Սփյուռքի ու Հայաստանի միջև: Խորհրդի հիմնական նպատակներն են աջակցել ՀՀ կառավարությանը ու մասնավոր հատվածին Հայաստանում հզոր և կայուն ՏՏ

ուրտ ստեղծելու գործընթացում, ինչպես նաև նպաստել առաջատար տեղեկատվական հասարակության ձևավորմանը:

2002թ. ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից ստեղծվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը»՝ Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն աջակցելու նպատակով: ՁԻՀ-ը Հայաստանում SS ոլորտի զարգացմանն ուղղված խոշորագույն նախաձեռնություն է:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ կառավարությունը համարում է միջազգային համագործակցության դաշտի կարևորագույն օղակներից մեկը: Այս շրջանակում իրագործվել են տարբեր ծրագրեր՝ Հայաստանում Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների եվրոպական տարածաշրջանային ինստիտուտը (ԷԴԻԻԿՏԱ), որը ստեղծվել է Եվրամիության ֆինանսական աջակցությամբ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (CAPS) և «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» (EDMC) ծրագրերը և այլն:

2008թ. ՀՀ կառավարությունն ընդունեց ոլորտի զարգացման նոր տասնամյա ռազմավարությունը, որը ներառում է ենթակառուցվածքի զարգացման, SS շրջանավարտների որակավորման բարձրացման, սկսնակ ընկերությունների համար վենչուրային և ֆինանսավորման այլ մեխանիզմների ստեղծման և այլ խնդիրներ: Նոր ռազմավարության հիմնական նպատակներն են՝ Հայաստանում ձևավորել կայացած տեղեկատվական հասարակություն, Հայաստանը հաղորդակից դարձնել գիտելիքի գոյացման համաշխարհային գործընթացներին, զարգացնել հզոր և առաջատար SS ոլորտ: Ռազմավարության նպատակներն են նաև՝ բարձրացնել համակարգչային հագեցվածության և ինտերնետի հասանելիության մակարդակը հասարակության բոլոր շերտերում և տնտեսության տարբեր ճյուղերում, կառուցել նոր տեխնոպարկեր և ինկուբատորներ, ստեղծել խոշոր վենչուրային հիմնադրամ, ընդլայնել հայկական շուկայի ծավալները տեղական SS արտադրանքի և ծառայությունների համար, մեծացնել օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները և այլ միջոցառումներ՝ ուղղված ինչպես Հայաստանում ՏՀՏ ոլորտի զարգացմանը, այնպես էլ երկրում տեղեկատվական հասարակության ձևավորմանը: Այդ ռազմավարության իրականացման և ընդհանուր SS ոլորտի զարգացման համար պատասխանատու պետական մարմինը ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն է:

2008թ.-ից ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը՝ Հայաստանում SS ոլորտի զարգացմանը պետական աջակցության ցուցաբերման նպատակով: Այս միջոցներն ուղղվում են SS ոլորտի հետազոտության, ոլորտի իրավիճակի վերլուծություն, ոլորտի ցուցանիշների և ձեռնարկությունների վերաբերյալ ուղեցույցի պատրաստման, Հայաստանում կազմակերպվող տեղային, տարածաշրջանային և միջազգային նշանակության ոլորտային միջոցառումների՝ ցուցահանդեսների, համաժողովների, գիտաժողովների, մրցույթների կազմակերպման, արտերկրում

կազմակերպվող ոլորտային առանցքային միջոցառումներին Հայաստանի մասնակցության, ինչպես նաև այլ պետությունների, միջազգային կառույցների և ոլորտի վերազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող մի շարք ծրագրերի և միջոցառումների իրականացման համաֆինանսավորմանը:

Ավանդական են դարձել ՀՀ կառավարության սերտ աջակցությամբ իրականացվող «Արմթեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների միջազգային համաժողովը և «Դիջիթեք» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված ցուցահանդեսը:

«Արմթեք» համաժողովների նպատակն է լուսաբանել Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող բարձր տեխնոլոգիաների ոլորտի աճը, խթանել միջազգային համագործակցությունը և ներդրումների ներգրավումը, նպաստել SS ոլորտի մասնագետների միջև համագործակցությանը, Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտը դարձնել հանրաճանաչ: Ամենամյա այս համաժողովը հաջորդաբար կազմակերպվում է Հայաստանում և ԱՄՆ-ում:

«Դիջիթեք» ցուցահանդեսների հիմնական նպատակը բարձր տեխնոլոգիաների ընկերությունների, գործարար սպառողների և հասարակության միջև հաղորդակցման բարենպաստ միջավայր ստեղծելն է: Ցուցահանդեսը հայաստանյան S2S դաշտի իրական պատկերն ուսումնասիրելու, ընկալելու, ձեռքբերումներն արձանագրելու, առկա մարտահրավերներն ու հնարավորությունները տեսնելու հարթակ է և միտված է SS ընկերությունների շուկա մուտք գործելուն, վերջինների ապրանքների և ծառայությունների ցուցադրմանը, ինչպես նաև միջազգային կապերի ընդլայնմանը:

ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին կնքվել են համագործակցության մի շարք պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ինչպես այլ պետությունների՝ Հնդկաստանի Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և այլն, այնպես էլ համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ընկերությունների հետ, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «Ալկաթելը», «Հյուլեթ Փակարդը», «Սան Մայքրոսիսթեմսը», «Նեյշնլ Ինսթրումենթսը», «Մենթոր Գրաֆիքսը», «Սիսկոն», «Ինթելը», «Սինոփսիսը», «Դ-Լինկը» և այլն:

ՀՀ կառավարության կողմից նպատակային ծրագրեր են իրականացվում SS ոլորտի զարգացման ենթակառուցածքների ձևավորման ուղղությամբ: Այդ իսկ նպատակով 2008թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: 2008թ.-ից ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը՝ Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացմանը պետական աջակցության ապահովման նպատակով: Այս ծրագրի նպատակն է Գյումրի քաղաքը վերածել «Գերազանցության կենտրոնի»՝ գործարար միջավայրի համբավ ունեցող տեխնոքաղաքի՝ խոշոր կրթօջախներով, գիտահետազոտական կենտրոններով, ինչպես նաև

բարձր տեխնոլոգիաներ կիրառող փոքր և միջին ձեռնարկություններով: Այն կընձեռի նորարարությունների, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների նախագծերի մշակման, փորձարկման, կյանքի կոչելու և լայնածավալ արտադրություններ հիմնելու մեծ հնարավորություններ:

ՀՀ Կառավարության կողմից ընդունված SՏՏ ոլորտի զարգացման նոր ռազմավարության նպատակներից է նաև Հայաստանում Տեղեկատվական հասարակության ձևավորումը, մասնավորապես համակարգիչների օգտագործման և ինտերնետի հասանելիության ծավալների էական մեծացումը: Այս նպատակին հասնելու համար մշակվել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը, որի նպատակն է՝

- ապահովել բնակչության համար համակարգիչների ձեռքբերման մատչելիությունը և հասանելիությունը,
- պատրաստել համակարգչային տեխնիկային և համապատասխան ծրագրային փաթեթներին տիրապետող օգտագործողներ,
- մեծացնել ինտերնետի հասանելիությունը բնակչության համար և խթանել էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը բնակիչների կողմից,
- նվազեցնել չլիցենզավորված ծրագրային փաթեթների տարածումը:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից՝ միջազգային և հայկական SՏՏ ընկերությունների, բանկերի, և այլ գործընկերների հետ համատեղ:

2010թ.-ին համագործակցության հուշագրեր են ստորագրվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, «Ինթել» և «Հյուլեթ Փակարդ» ընկերությունների, ՁԻՀ-ի և Յունիքոմփ ՓԲԸ միջև՝ Հայաստանում «Համակարգիչ ուսուցիչների համար» (Teachers PC) և «Դպրոցական համակարգիչ» (“ClassmatePC”) փորձնական ծրագրերի իրականացման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» N7 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանում էլ. հասարակության ձևավորման հայեցակարգը՝ հաջորդող մի քանի տարիներին իրականացնելու համար:

Էլեկտրոնային կառավարման համակարգերի առավելագույն կիրառումը խթանելու նպատակով 2010թ. ՀՀ կառավարության կողմից ներդրվել է www.e-gov.am էլեկտրոնային կառավարման պորտալը, որի նպատակն է մեկտեղել Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների հիմնապաշարները և հարմարավետ միջավայր ստեղծել դրանց օգտագործման համար: Կայքում մատուցվում են լիցենզիաների հայտերի էլեկտրոնային ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, էլեկտրոնային վիզայի, Մտավոր սեփականության

գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման, էլեկտրոնային ստորագրությունների ստացման, էլեկտրոնային գնումներ և այլ ծառայություններ: Էլեկտրոնային կառավարման պորտալի համալրումը նոր ծառայություններով կրում է շարունակական բնույթ: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում այլ էլեկտրոնային ծառայությունների՝ էլեկտրոնային առողջապահության, էլեկտրոնային կրթության, էլեկտրոնային կենսաթոշակային համակարգի, էլեկտրոնային նույնականացման ներդրման ուղղությամբ:

Վերը նշված մի շարք նպատակների և ոլորտի զարգացմանն ուղղված այլ ծրագրերի և միջոցառումների կյանքի կոչման նպատակով ՀՀ կառավարությունը վարկային համաձայնագիր է կնքել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հետ, որի արդյունքում 2011թ.-ից մեկնարկել է «Էլեկտրոնային հասարակություն և նորարարություն՝ հանուն մրցունակության» ծրագիրը: Այն ներառում է Հայաստանում S2S ենթակառուցվածքի զարգացմանը, ոլորտի զարգացումը խթանող միջոցառումների իրականացմանը, Տեղեկատվական հասարակության կայացմանն ուղղված մի շարք ենթածրագրեր, այդ թվում՝ «Համահայկական լայնաշերտ կապուղի և կառավարական ցանց», «ՀՀ-ում հավաստագրման կենտրոնի ներդրում», «Համակարգիչ բոլորի համար ծրագիր», «Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնի հիմնադրում», «Ֆինանսական օժանդակություն նորարարությանը գիտելիքներ և տեխնոլոգիաների կիրառում պահանջող ընկերություններում», «Աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների/գիտատար ոլորտների զարգացմանը» և այլն:

Հայաստանի Հանրապետությունը 2011 թվականի հուլիսից 1.5 տարի ժամկետով ստանձնել էր Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակում գործող «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների» աշխատանքային խմբի համակարգումը:

2012թ. Հայաստանի Հանրապետության Կառավարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, «National Instruments» ընկերության (NI), Հայաստանի Պետական ճարտարագիտական Համալսարանի (ՀՊՀՀ) և Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամի (ՁԻՀ) ակտիվ նախաձեռնությամբ մեկնարկեցին Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիայի /Armenian National Engineering Lab (ANEL)/ հիմնադրման աշխատանքները: Ծրագիրը նպատակ ունի բավարարել ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնոլոգիական կրթություն ունեցող որակյալ մասնագետների և շրջանավարտների պահանջարկը, որն այսօր առկա է ճարտարագիտական ոլորտում: Դա կօգնի Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերություններին լրացնել աշխատողների պակասը, իրականացնել ավեացված արժեքով և առավել նորարար բիզնես գործունեություն՝ այդպիսով բարձրացնելով իրենց միջազգային մրցունակությունը:

Երկրում գիտական հետազոտությունների ու մշակումների ուղղությամբ իրականացվող գործունեության ընդլայնումը, ինչպես նաև մասնավոր հատվածի փորձի, գիտական ոլորտի ավանդույթների ու հետազոտական ներուժի համախմբումը թույլ կտան իրականացնել

ծրագրի ամենադժվարին նպատակը, այն է՝ ձևավորել մասնավոր ու պետական հատվածների կայուն համագործակցություն և խթանել տեխնոլոգիական նորարարությունը:

2012թ.-ի դեկտեմբերին ԱՄՆ Միլիկոնյան հովտում՝ Plug & Play տեխնոլոգիական կենտրոնում բացվեց Հայաստանի Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների /SFS/ ներկայացուցչական գրասենյակը: Գրասենյակը գործելու է որպես հայկական SFS ընկերությունների համար ԱՄՆ-ում վաճառքների և ներդրումների խթանման կենտրոն, որը կապահովի հայկական SS ոլորտի տեսանելիությունը և ներկայությունը ԱՄՆ-ի շուկայում, հայկական SFS արտադրանքի և կարողությունների ներկայացումը և առաջխաղացումը ԱՄՆ-ում, ինչպես նաև բիզնես կապերի ստեղծումը հայկական և ամերիկյան ընկերությունների և ներդրողների միջև:

2012թ. դեկտեմբերին ՀՀ Կառավարության և «Ինթել» կորպորացիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր՝ կրթության և հետազոտությունների բնագավառում համագործակցության վերաբերյալ: Հուշագրի շրջանակում նախատեսվում է ընդլայնել Հայաստանի և «Ինթել» ընկերության միջև համագործակցությունը ուսուցիչների վերապատրաստման, դպրոցներում համակարգչային հագեցվածության բարձրացման և կրթական բովանդակության ձևավորման ուղղությամբ, ինչպես նաև նոր համագործակցություն հաստատել ծրագրավորման և համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման ոլորտներում:

2012թ. դեկտեմբերին ստորագրվել է նաև հուշագիր ՀՀ կառավարության և «Կորպորասիոն Ամերիկա» ընկերության միջև՝ Հայաստանում կիսահաղորդիչների արտադրություն և SS հետազոտությունների ու զարգացման կենտրոն հիմնելու և գործարկելու մասին:

2012 թվականին Հայաստանում ստեղծվել է առաջին ազատ տնտեսական գոտին: Ազատ տնտեսական գոտու ստեղծման հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով նպաստել արտահանման ծավալների աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանը և ապահովել կայուն տնտեսական զարգացում: «ՌԱՕ ՄԱՐՄ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ստեղծված ազատ տնտեսական գոտին ունի բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների/ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներում: Ազատ տնտեսական գոտու շահագործողներն ազատված են շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի և մաքսատուրքի վճարման պարտավորություններից:

2013թ.-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ ստեղծվել է Հայաստանում առաջին վենչուրային հիմնադրամը: Տվյալ նախաձեռնության առաջնային կարևորությունը հայաստանյան SS ընկերությունների համար կայանում է, մասնավորապես, նրանում, որ

նշված վենչուրային ֆոնդը նպատակ ունի նպաստել Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունների նորարարությանը, խթանել բարձր տեխնոլոգիաների արևմտյան շուկայի հետ կապեր հաստատելու գործընթացները ու ՕՈՒՆ հնարավորությունները, զարգացնել Հայաստանի Տեղեկատվական Տեխնոլոգիաների ենթակառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում:

2013 թվականին փոխընթերցման հուշագիր է ստորագրվել ՀՀ Կառավարության և IBM ընկերության միջև կրթության և գիտահետազատական ու փորձարարական աշխատանքների ոլորտում, որը նպատակաուղղված է Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի ստեղծմանը:

2014 թվականի դեկտեմբերին ՀՀ Կառավարության IBM ընկերության միջև ստորագրվել է մեկ այլ փոխընթերցման հուշագիր՝ սոցիալական ծառայությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ, որը մասնավորապես ուղղված է Հայաստանում IBM-ի Curam տեխնոլոգիաների ներդրմանը, ինպես նաև սոցիալական ծառայությունների ոլորտում Գերազանցության կենտրոնի ստեղծմանը:

SS Ոլորտի զարգացման թիրախներ	
	2018
Տնային տնտեսությունների համակարգչային հագեցվածությունը	70%
Կրթական հաստատությունների համակարգչային հագեցվածությունը	100%
Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգչային հագեցվածությունը	100%
Ինտերնետ կապի հասանելիությունը բնակչության շրջանում	90%
ՀՀ պետական մարմինների ծախսերը հայրենական SS արտադրանքի վրա՝ պետությունից ընդհանուր ծախսերում	>1%
Ներքին շուկայում հայրենական SS արտադրանքի սպառման մասնաբաժինը ՀՆԱ-ում	>2%
Էլ. ծառայությունների մասնաբաժինը ՀՀ պետական մարմինների կողմից մատուցվող ընդհանուր ծառայություններում	80%
SS ոլորտի ընկերությունների քանակը որից՝ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ	1000 200
SS ոլորտի աշխատուժ	20000
SS ոլորտի արտադրողականությունը՝ մեկ աշխատողի հաշվով	50,000 ԱՄՆ դոլար
SS ոլորտի եկամուտները	1 մլրդ ԱՄՆ դոլար
SS ոլորտի արտահանման ծավալը	700 մլն ԱՄՆ դոլար
SS ոլորտի ընկերություններ 1,000-ից ավելի աշխատողներով	>1
SS ոլորտի գիտահետազոտական ընկերություններ	100-200

Խոշոր տեխնոլիգիական քաղաք Տեխնոպարկեր և ինկուբատորներ	>1 >10
Ներգրավված վենչուրային կապիտալ	>700 մլն ԱՄՆ դոլար
Արժեթղթերի տեղական բորսայում հաշվառված ՏՏ ոլորտի տեղական բաց բաժնետիրական ընկերություններ	50 – 100
Արժեթղթերի միջազգային բորսաներում հաշվառված ՏՏ ոլորտի տեղական բաց բաժնետիրական ընկերություններ	>5

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ոլորտի վիճակագրություն

	2014	% ընդհանուր ոլորտում	2010	% ընդհանուր ոլորտում	% տարբերությունը 2014/2010	կուտակային տարեկան աճ 2014/2010
Ընկերությունների թիվը						
Ընդհանուր	396	100%	197	100%	101%	26.2%
Տեղական ընկերություններ	239	60%	125	63%	91%	24.1%
Ինտերնետ	20	5%	16	8%	25%	7.7%
ծառայություններ մատուցող (ԻԾՄ) ընկերություններ						
Օտարերկրյա	157	40%	72	37%	118%	29.7%
մասնաձյուղեր						
Ինտերնետ	13	3%	3	2%	333%	63.0%
ծառայություններ մատուցող (ԻԾՄ) ընկերություններ						
Օտարերկրյա մասնակցությամբ ընկերությունների աշխարհագրական բաշխումը						
Ընդհանուր քանակ	396	100%	197	100%	101%	26.2%
Հայաստան	239	60%	125	63%	91%	24.1%
ԱՄՆ և Հյուսիսային Ամերիկա	75	19%	36	18%	108%	27.7%
Եվրոպա	38	10%	18	9%	111%	28.3%
Ռուսաստան և ԱՊՀ	30	8%	15	8%	100%	26.0%
Այլ	14	4%	3	2%	367%	67.1%
Արտասահմանյան շուկաները (միլիոն ԱՄՆ դոլար)						
Ընդհանուր ծավալը	\$153.2	100%	\$58.2	100%	163%	38.1%
ԱՄՆ և Հյուսիսային Ամերիկա	\$120.4	79%	\$40.5	70%	197%	43.8%
Եվրոպա	\$15.9	10%	\$11.1	19%	44%	12.8%
Ռուսաստան և ԱՊՀ	\$12.9	8%	\$4.9	8%	163%	38.0%
Այլ	\$4.0	3%	\$1.6	3%	149%	35.5%
Արտադրողականություն (մեկ տեխնիկական աշխատողի միջին արտադրողականությունը, բացառությամբ ԻԾՄ), ԱՄՆ դոլար						
Ոլորտ	\$38,192	100%	\$31,548	100%	21%	6.6%
Տեղական ընկերություններ	\$30,461	80%	\$29,186	93%	4%	1.4%
Օտարերկրյա մասնաձյուղեր	\$45,923	120%	\$33,668	107%	36%	10.9%

Ծրագրային ապահովման և ինտերնետ ծառայության ոլորտի շրջանառությունը, միլիոն ԱՄՆ դոլար	2014	% ընդհանուր ոլորտում	2010	% ընդհանուր ոլորտում	% տարբերությու նը 2014/2010	կուտակային տարեկան աճ 2014/2010
Ոլորտ	\$474.9	100%	\$148.8	100%	219%	47.2%
Տեղական ընկերություններ	\$18		\$57.			
Օտարերկրյա մասնաձյուղեր	0.9	38%	8	39%	213%	46.3%
	\$29		\$91.			
	4.0	62%	1	61%	223%	47.8%
Տեղական շուկան	\$321.7	68%	\$90.7	61%	255%	52.5%
Տեղական ընկերություններ	\$15		\$46.			
	9.4	33.6%	9	32%	240%	50.4%
Ծրագրավորում և SS խորհրդատվություն	\$		\$			
	153.2	32%	32.4	22%	373%	67.8%
Ինտերնետ ծառայություններ	\$		\$			
	6.3	1%	14.5	10%	-57%	-24.3%
Արտասահմանյան մասնաձյուղեր	\$16		\$43.			
	2.3	34.2%	7	29%	271%	54.9%
Ծրագրավորում և SS խորհրդատվություն	\$		\$			
	42.8	9%	8.2	6%	423%	73.5%
Ինտերնետ ծառայություններ	\$		\$			
	119.4	25%	35.5	24%	236%	49.8%
Արտահանման ծավալներ	\$153.2	32%	\$58.2	39%	163%	38.1%
Արտասահմանյան մասնաձյուղեր	\$21.		\$10.			
	4	5%	8	7%	99%	25.7%
Ընդհանուր ծավալը	\$13		\$47.			
	1.8	28%	3	32%	179%	40.7%
Ծրագրավորում և SS խորհրդատվություն	\$474.9	100%	\$148.8	100%	219%	47.2%
Ինտերնետ ծառայություններ	\$34		\$98.			
	9.2	74%	8	66%	253%	52.3%
Օտարերկրյա մասնաձյուղեր	\$12		\$50.			
	5.7	26%	0	34%	151%	36.0%

Ոլորտի շրջանառություն, (Nace խմբ. 2 դասակարգում) միլիոն ԱՄՆ դոլար	2014	% ընդհանուր ոլորտում	2013	% ընդհանուր ոլորտում	2014/2013	կուտակային տարեկան աճ 2014/2013
Ծրագրային ապահովում և ծառայություններ	\$349.2	100%	\$294.20	100%	19%	5.9%
58.21 Համակարգչային խաղերի հրատարակում	\$5.38	2%	\$1.90	1%	183%	41.5%
58.29 Այլ ծրագրային հրատարակչություն	\$13.10	4%	\$1.90	1%	589%	90.3%
62.01 Համակարգչային ծրագրավորման աշխատանքներ	\$209.2	60%	\$178.80	61%	17%	5.4%
62.02 Համակարգչային խորհրդատվական աշխատանքներ	\$52.90	15%	\$49.10	17%	8%	2.5%
62.03 Համակարգչային ռեսուրսների կառավարման աշխատանքներ	\$63.47	18%	\$58.70	20%	8%	2.6%
62.09 Այլ տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային ծառայությունների աշխատանքներ	\$ 5.1	1%	\$3.80	1%	35%	10.6%
Հեռահաղորդակցություն	\$474.68	100%	\$470.90	100%	1%	0.3%
61.10 Լարային հեռահաղորդակցության աշխատանքներ	\$119.8	25%	\$87	18%	38%	11.3%
61.20 Անլար հեռահաղորդակցության աշխատանքներ	\$303	64%	\$279	59%	9%	2.8%
61.90 Այլ հեռահաղորդակցության աշխատանքներ	\$13.00	3%	\$7.50	2%	73%	20.1%
63.1 Տվյալների մշակում, հոսթինգի և հարակից աշխատանքներ, վեբ պորտալներ	\$1.59	0.3%	\$1.26	0%	26%	8.1%
Տելեկոմ ոլորտի այլ եկամուտներ	\$ 37.19	8%	\$ 96.14	20%	-61%	-27.1%

Մասնագետների բաշխում*	2014	% ընդհանուր ոլորտում	2010	% ընդհանուր ոլորտում	% տարբերությունը 2014/2010	կուտակային տարեկան աճ 2014/2010
Ընդհանուր թիվը	11,564	100%	4,960	100%	133%	32.6%
Տեխնիկական մասնագետներ	9,562	83%	4,110	83%	133%	32.5%
Ղեկավարներ	2,002	17%	850	17%	136%	33.1%
Ծրագրավորում և SS խորհրդատվություն	8,219	71%	3,770	76%	118%	29.7%
Տեղական ընկերություններ	4,543	39%	1,880	38%	142%	34.2%
Օտարերկրյա մասնաճյուղեր	3,676	32%	1,890	38%	94%	24.8%
Ինտերնետ ծառայություններ	3,345	29%	1,190	24%	181%	41.1%
Տեղական ընկերություններ	600	5%	240	5%	150%	35.7%
Օտարերկրյա մասնաճյուղեր	2,745	24%	950	19%	189%	42.4%
Տեղական ընկերություններ	5,143	44%	2,120	43%	143%	34.4%
Տեխնիկական մասնագետներ	4,150	36%	1,660	33%	150%	35.7%
Ղեկավարներ	993	9%	460	9%	116%	29.2%
Օտարերկրյա մասնաճյուղեր	6,421	56%	2,830	57%	127%	31.4%
Տեխնիկական մասնագետներ	5,413	47%	2,450	49%	121%	30.2%
Ղեկավարներ	1,008	9%	380	8%	165%	38.4%
Ծրագրավորում և SS խորհրդատվություն	8,219	71%	3,770	76%	118%	29.7%
Տեխնիկական մասնագետներ	6,941	60%	3,130	63%	122%	30.4%
Ղեկավարներ	1,278	11%	640	13%	100%	25.9%
Ինտերնետ ծառայություններ	3,345	29%	1,190	24%	181%	41.1%
Տեխնիկական մասնագետներ	2,621	23%	980	20%	167%	38.8%
Ղեկավարներ	724	6%	210	4%	245%	51.1%

* Ընդհանուր թվերը
կլորացված են

Ընկերությունների թիվը ըստ մասնագիտացումների	Ընդհանուր 2014	Տեղական ընկերու- թյուններ 2014	Օտար- երկրյա մասնա- ճյուղեր 2014	Ընդհանուր 2010	Տեղական ընկերու- թյուններ 2010	Օտար- երկրյա մասնա- ճյուղեր 2010
1. Հաշվապահական, բանկային և ֆինանսական ծրագրեր	7%	5%	2%	5.3%	4.2%	1.1%
2. Միկրոսխեմաների նախագծում, տեստավորում և հարակից ոլորտներ	6%	2%	4%	2.5%	0.4%	2.1%
3. Համակարգչային գրաֆիկա, մուլտիմեդիա և խաղեր	5%	5%	1%	6.4%	5.3%	1.1%
4. Ծրագրային ապահովման պատվերներ և արտապատվիրում	17%	12%	5%	21.6%	10.2%	11.4%
5. Տվյալների շտեմարան և կառավարման տեղեկատվական համակարգեր	4%	2%	2%	6.0%	4.6%	1.4%
6. Ինտերնետային ծրագրեր և էլ. առևտուր	5%	4%	2%	11.3%	8.1%	3.2%
7. ՏՏ ծառայություններ և խորհրդատվություն	7%	5%	2%	11.3%	8.1%	3.2%
8. Մոբայլ ծրագրերի մշակում	8%	5%	3%	*		
9. Համակարգերի մշակում և ավտոմատիզացիա	15%	12%	4%	*		
10. Ցանցային համակարգեր և հաղորդակցություն	9%	5%	4%	6.4%	4.2%	2.2%
11. Վեբ դիզայն և ծրագրավորում	6%	5%	1%	17.7%	14.1%	3.6%
12. Այլ	2%	1%	1%	7.3%	3.2%	4.1%
13. Ինտերնետ ծառայությունների պրովայդեր	8%	8%	0%	10.2%	5.7%	4.5%
* «Մոբայլ ծրագրերի մշակում», ինչպես նաև «Համակարգերի մշակում և ավտոմատիզացիա» մասնագիտացումները տարանջատվել են 2012 թվականից սկսած						

Եկամուտների բաշխումը ըստ մասնագիտացման	Ընդհանուր 2014	Տեղական ընկերու- թյուններ 2014	Օտարերկրյա մասնա- ձյուղեր 2014	Ընդհանուր 2010	Տեղական ընկերու- թյուններ 2010	Օտարերկրյա մասնա- ձյուղեր 2010
1. Հաշվապահական, բանկային և ֆինանսական ծրագրեր	\$26.4	\$11.4	\$15.0	\$7.8	\$5.3	\$2.5
2. Միկրոսիսեմաների նախագծում, տեստավորում և հարակից ոլորտներ	\$70.4	\$3.7	\$66.7	\$21.0	\$0.7	\$20.3
3. Համակարգչային գրաֆիկա, մուլտիմեդիա և խաղեր	\$5.4	\$5.3	\$0.1	\$2.7	\$1.9	\$0.8
4. Ծրագրային ապահովման պատվերներ և արտապատվիրում	\$86.4	\$42.9	\$43.5	\$25.4	\$10.5	\$14.9
5. Տվյալների շտեմարան և կառավարման տեղեկատվական համակարգեր	\$7.3	\$2.1	\$5.2	\$3.6	\$3.0	\$0.6
6. Բնտերնետային ծրագրեր և էլ. առևտուր	\$13.1	\$7.5	\$5.5	\$2.5	\$1.6	\$0.9
7. ՏՏ ծառայություններ և խորհրդատվություն	\$19.4	\$5.3	\$14.0	\$12.7	\$6.9	\$5.8
8. Մոբայլ ծրագրերի մշակում	\$18.9	\$12.3	\$6.6	*		
9. Համակարգերի մշակում և ավտոմատիզացիա	\$29.7	\$13.7	\$16.1	*		
10. Ցանցային համակարգեր և հաղորդակցություն	\$33.5	\$26.2	\$7.3	\$5.7	\$3.0	\$2.7
11. Վեբ դիզայն և ծրագրավորում	\$33.5	\$26.2	\$7.3	\$6.6	\$4.8	\$1.8
12. Այլ	\$ 5.1	\$ 3.7	\$1.4	\$10.8	\$5.6	\$5.2
13. Բնտերնետ ծառայությունների պրովայդեր	\$ 125.7	\$ 6.3	\$119.4	\$ 50.0	\$ 15.5	\$34.5
* «Մոբայլ ծրագրերի մշակում», ինչպես նաև «Համակարգերի մշակում և ավտոմատիզացիա» մասնագիտացումները տարանջատվել են 2012 թվականից սկսած						

